

10646

ՆԻԿԻՑԻՆ

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.
Цена 25 коп.

ՅԼ ԲՈՐԴԸ ՎՃՌՈՒՄ Ե

ԿՈՄՅԵՐԻՏԱՐԻՈՒԹՅՈՒՆԸ
ԲՈՂՇԵՎԻԿՅԱՆ Յ-ՐԴ
ՑԱՆՔԻ ՀԱԿԱՏՈՒՄ

Թարգմ. Հ. ՄԱՅԻՍ.

3KCM5
7-69

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
1932 ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

09 DEC 2006
24 SEP 2006

Ն Ի Կ Ի Ց Ի Ն

ՅԵՐՐՈՐԴԸ ՎՃՌՈՒՄ Ե

ԿՈՍՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ Յ.ՐԴ ՅԱՆՔԻ
ՃԱԿԱՏՈՒՄ

34CM5

Թարգմ. Հ. Մազմ.

Գ-69

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՄՈՏԻԿ ԱՆՑՅԱԼԻ ՅԵՎ ՆԵՐԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Կոմյերիտմիությունը կուսակցության ամենամոտիկ ոգնականն է: Քաղաքացիական պատերազմի որերում, ինչպես և այսօր—սոցիալիզմի կառուցման և դասակարգային թշնամու հետ վճռական պայքարի որերում—կոմյերիտմիությունը միշտ յեղել է աշխատավոր ճակատամասերում: Նա միշտ յեղել է այնտեղ, ուր նրան ուղարկել է կուսակցությունը: Վճռական զիրքերում կոմյերիտականները կռվել են, ոգնել են ու ոգնում են սոցիալիզմի համար մղվող պայքարին:

Ահա մոտիկ անցյալը—1917—1922 թվականների քաղաքացիական կռիվների անեղ ուռերը:

— Վերին-Դոնի շրջանի Ուստ-Պոպերսկայա ավանի «Մեծ» կոչված գյուղակի կոմյերիտականները, թվով ութը հոգի, զիրքեր բռնեցին ազորիքում: Նրանք յետ մղեցին ավելի քան հարյուր ձիավորից բաղկացած թշնամու հարձակումը, զրավեցին մի քանի ձի և շատ զենք:

— Դոնեցկի շրջանի Մայնկովո-Կալիտվենսկի բլիշը զինաթափեց հինգ հոգուց բաղկացած հրոսակախումբը (բանդան): Այսպիսով նա զրավեց հինգ հրացան, մի քանի պարանոցներ և փամփուշտներ:

— Նախկին Դոնեցկի շրջանի կազմակերպության մեջ մինչև 1922 թվականի սկիզբը կար 202 կոմյերիտական:

11.07.2013

10646

Կոմյերիտմիութեան այս 202 անդամները մեկ և կես տարվա ընթացքում հաջորդաբար հիսուն անգամ կազմեցին հրոսակների (բանդիտների) դեմ, վաթսուներեք անգամ դիմադրեցին թշնամուն: Կոմյերիտականները տվին քսանյոթը վիրավոր, տասնվեց սպանված, 50 հոգի գերեզման, վորոնցից քսանմեկը զազանային տանջանքների յենթարկվեցին:

Այս յեկ բազմաթիվ ուրիշ փաստերը կենդանի վկայություն են այն մասին, թե Լեհիստանի կոմյերիտականները, զենքի բնակիչներ, ինչպիսի հերոսական պայքար են մղել խորհրդային իշխանության համար յեկ սպիտակ հրոսակների, դասակարգային բռնամիտների դեմ:

Վերջերք ներկա որերին ավելի մոտիկ շրջանը, Հյուսիսային Կովկասում յեռում են պայքարը համատարած կոլեկտիվացման համար: Կոմյերիտմիութեանը, կուսակցության ղեկավարությանը, արդեն ուրիշ մեթոդներով ու ձևերով են կովում դասակարգային թշնամու դեմ: Համատարած կոլեկտիվացման հիմունքով հիմնականում վերացված են դարավոր շահագործողների, կուլակների դասակարգը: Մեր յերկրի ինդուստրացման, գյուղատնտեսության մեքենայացման վերաբերմամբ կուսակցության ուղիղ գիծն ապահովում են հաղթանակը:

Միջակների ամբողջ մասսան, համոզվելով, վոր կոլեկտիվ տնտեսությունն անհամեմատ մեծ առավելություններ ունի, մտավ կոլտնտեսությունները:

1931 թվականի գարունն են: Անց են կացվում բոլշևիկյան յերկրորդ ցանքը: Հյուսիսային Կովկասը դարձած են համատարած կոլեկտիվացման յերկրամաս:

Այդ անցյալ տարի յեր, յերբ Խորհրդային Միության մեջ վերացավ գործադրկությունը, յերբ կուսակցության 16-րդ համագումարի վորոշմամբ, մեր յերկրում հաջողությամբ ծավալվեց սոցիալիստական հարձակումն ամբողջ ֆրոնտով:

— Գարնանացանի հարվածայինները ցույց տվին հիանալի աշխատանքի որինակ: «Շախտյոր» կոչված հացահատ

տիկային խորհրտնտեսության մեջ կոմյերիտական Մեդիկովը տվեց չտեսնված նորմա—ութը ժամում ութսուն հեկտար ցանք արավ: Հարվածային Մակսիմենկոն նորման կատարեց հարյուր հիսուն տոկոսով: ՄՏԿ (մեքենա-տրակտորային կայանի) մի հարվածային տրակտորիստ յերեսունվեց կիլոգրամ վառելանյութ տնտեսեց մի հերթափոխման ընթացքում:

— «Գիգանտ» խորհրտնտեսության մեջ տրակտորիստուհի Սորոկան անընդհատ աշխատեց քառասունութը ժամ:

— «Վոլգյան կոմունա» հացահատիկային խորհրտնտեսության կոմյերիտական տրակտորիստ Ֆեդոսենը, աշխատելով հատերալիլներ տրակտորի վրա, նկատեց, վոր տրակտորից կաթուղի են վառելահեղուկը: Նա փորձեց առանց տրակտորը կանգնեցնելու, գլխարկով ծածկել անցքը: Այդ ժամանակ տրակտորը, վոր անցնում եր փոսով՝ ցնցվեց: Անսպասելի ցնցումից Ֆեդոսենը ընկավ շղթայաշարժի (գուսենիցայի) վրա, վորը նրան գցեց տրակտորի տակ...

Ֆեդոսենը, վորի ձեռներն և կողքն արդեն քերծվել ու արյունոտվել եյին, հավաքեց իր վերջին ուշժերը, մի կերպ վորսաց ելեկտրոլարն և կտրեց: Մեքենան կանգ առավ: Դրանից հետո Ֆեդոսենը միացրեց ելեկտրոլարերը: Տրակտորը դնաց: Ֆեդոսենը շտապ հայտնեց վրա վազող տրակտորիստներին:

— Տղերք ջան, աշխատանքը շարունակում եմ: Նորման կկատարեմ և տեմպը չեմ պակսեցնի—և նա աշխատեց մինչև ցանքի վերջը:

Ահա փաստեր, վորոնք վկայում են Լենինյան կոմյերիտմիութեան հերոսական պայքարը տնտեսական ֆրոնտում, մանր սեփականատիրոջ սոցիալիստական վերափոխման, գյուղի և քաղաքի միջև յեղած տարբերությունը վոչնչացնելու համար: Ասխատանքի սեմպեր, հաղթանակների հաջողությունները ձեռք են բերվում աջ—գլխավոր վսանգի յեկ «ձախ» խոսքումների դեմ կուսակցության փորձառու ղեկավարությամբ մղվող անհատ պայքարում:

16/43-58

Այժմ գալիս ե բոլշևիկյան յերրորդ գարունը, հնգամ-
յակի ավարտական, չորրորդ տարվա գարունը: Յերրորդ
գարունը վճռում ե կոլտնտեսութեան կազմակերպչական-
տնտեսական ամրապնդման հարցը: Յե՛վ այստեղ, ինչպես ե
նախորդ տարիներում, կոմունիստական կուսակցութեան
ղեկավարութեամբ, բոլոր ռանգի ռպորտունիստներին դե՛մ
պայքարելով, ջարդ ու փշուր անելով հակահեղափոխական
տրոցկիզմի փորձերը—գյուղատնտեսութեան վոչ միայն
թեորիայի, այլ ե պրակտիկայի մեջ խցկելու իր դադափար-
ները—ոգտադործելով անցյալ մարտերի փորձերն ե մաս-
նավորապես այս գրքույկում մասամբ միայն նկարագրված
փորձերը,—Հյուսիսային Կովկասի չորս հարյուր հազարանոց
կոմյետիսական կազմակերպությունը կիրագործի կուսակցու-
թյան կողմից իր առաջ դրված խնդիրները:

Հեղինակ

ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՎԱՐՏՄԱՆ ՏԱՐԻՆ

«Կապիտալիզմն ավելի խորն ե ընկնում համաշ-
խարհային ճգնաժամի անդունդը: Մի շարք յերկրնե-
րում ճգնաժամը շարունակվում ե յերկու տարի ե
նույնիսկ ավելի: Բայց դեռևս նրա վերջանալու ե
վոչ մի նշան չկա: Ընդհակառակը, համաշխարհային
ճգնաժամն որեցոր ավելի յե թուլացնում կապիտա-
լիստական հիմունքները: (Մոլոտով)

Կապիտալիստները կաշուց դուրս են գալիս ճգնաժա-
մից «յեղք» գտնելու համար: Ինչ միջոցի ասես, վոր նրանք
չեն դիմում: Որինակի համար, Ամերիկայում այդ պարոնայք
կապիտալիստները ստիպված են վոչնչացնել կուտակված
հարստությունները, կարծելով, վոր դրանով կմեղմացնեն
ճգնաժամը:

Բրազիլիայի (Հարավային Ամերիկա) «Ել նույն տիեմ-
պո» լրագիրը հաղորդում ե, վոր վոչնչացված ե մոտ մեկ
միլիոն պարկ (մշոկ) սուրճ: Ուրուգվայում (Հարավային
Ամերիկա) յեղիպտացորենն իբրև վառելիք ե գործ ածվում
շոգենավերում: Գերմանական մի ելեկտրոկայան 800 տոնն
յեղիպտացորեն ե գնել վորպես վառելիք:

Յերևակայեցե՛ք մի այդպիսի յերևույթ մեղանում: Ել
գլուխ ցավեցնելու կարիք չկա, թե ինչ կլինի: Մեղանում
նման գործերի համար կամ կնստացնեյին իբրև յերդվյալ
փնասարարի, կկազմակերպեյին ցուցադրական դատ, այստեղ
կխառնվեյին դատախազությունը, ԲԳՏ-ը, խորհրդային
հասարակայնությունը,—կամ նման գործի հեղինակին, իբ-
րև խելագարի, գժանոց կուղարկեյին: Յե՛վ իհարկե, ան-
պատիժ չեյին թողնի:

Իսկ կապիտալիստական յերկրներում,
Այնտեղ մեկ կողմից գործազուրկ, սոված մասսաները
չեն կարողանում որական մի կտոր հաց ճարել, իսկ մյուս
կողմից—հարյուր հազարավոր ու միլիոնավոր տոնն մթերք-
ներ վոչնչացվում են, վոր ինչ է, նրանց դները չընկնեն:

Կապիտալիզմը չի կարող զսպել հենց իր կողմից կյան-
քի կոչված արտադրական ուժերն և հիշված ծայրայեղ
մեջոցները չեն փրկում կապիտալիստական գյուղատնտե-
սությունը անկումից:

Կապիտալիստական սիստեմը փակուղի յի մտել: Նա-
սնանկացել է:

Ստեղծված դրությունից կարող է փրկել միայն պրո-
լետարական հեղափոխութունը: Տեխնիկան, վորն այնքան
լայն չափերով կարող է գործադրվել մեր Միության դաշ-
տերում, տրակտորը, վոր խորհրդային իշխանության պայ-
մաններում մեծ դեր է խաղում կոլեկտիվ տնտեսության
համար պայքարելիս,—ահա այդ տեխնիկան, տրակտորը,
կապիտալիստական սիստեմի պայմաններում անգործու-
թյան են մատնված:

Մի շարք արևմտյան յերկրներում ավելի և ավելի հա-
ճախ այսպիսի առաջարկ են անում.—ճգնաժամից ազատվե-
լու, կամ գոնե նրան թեթևացնելու համար յեկեք գյուղա-
տնտեսության մեջ ել մեքենաներ չբանեցնենք: Ամերիկա-
կան հյուպատոս Ջոն Եմբերին հաղորդում է, վոր Կանա-
դայի մի շարք շրջաններում տրակտորների փոխարեն ելի
ձի յեն բանեցնում: Վոչնչացնելով արտադրված մթերքնե-
րը, կրճատելով ցանքերի տարածություններն ու տնտե-
սության ապրանքայնությունը, կապիտալիստները փորձում
են դրանով պահպանել դների միևնույն մակերևութը,
թույլ չտալ նրանց հետագա անկումը:

Սակայն վոչ մի միջոց չի ոգնում ձգնաժամի շնորհիվ
ցասիկ ֆայֆալում և գյուղացիությունը, աղֆասնում և
գյուղացիական մասսաները: Յերե Ամերիկայում 1922 թվին
յուրաքանչյուր հազար ճնեսությունից անուրդով ծախվել էին

19-ը, ապա 1931 թվին չգանձված հարկերի դիմաց ծախվել
են 16 ճնեսություններ (ամեն մի հազարից):

Աշխատավոր գյուղացիության թալանված մասսաների
համար ավելի է ավելի հասկանալի յեն դառնում Կարլ
Մարքսի այն խոսքերը, թե կապիտալիզմի պայմաններում
«գյուղացիության շահագործումը գործարանային պրոլե-
տարիատի շահագործումից տարբերվում է միայն իր ձևով:
Շահագործողը հենց նույն կապիտալն է... Կապիտալիստ-
ների դասակարգը շահագործում է գյուղացիների դասակար-
գին պետական հարկերի միջոցով»:

Արևմուտքի թալանված գյուղացիության համար ավելի
և ավելի պարզվում է այն, վոր խորհրդային սահմանների
մեջ, կարմիր զծի ներսում չկան ճգնաժամեր: Ընդհակառա-
կը, կուսակցության ղեկավարությամբ ընթանում է մարդ-
կության պատմության մեջ չտեսնված՝ սոցիալիստական
հասարակության ստեղծում:

Արդեն անցավ հնգամյակի յերեք տարին: Չորրորդ
տարում հնգամյակը կավարտվի բոլոր մասնաճյուղերում:
Այդ նշանակում է, վոր ձեռք է բերված համաշխարհային
պատմական նշանակութուն ունեցող հաղթանակ: Այժմ չի
խանգարում հիշել արտասահմանյան մամուլի հարա-հրոցը
«բոլշևիկների ֆանտազիայի» ճարպիկ «ազլիտացիոն մանե-
րի» մասին, այն մասին, թե ինչպես դանադան բուրժուական
լրագիրներ ահաղին վոռնոց էյին բարձրացրել հնգամյա
պլանի առթիվ:

Արտահայտելով բուրժուազիայի վորոշ շրջաններ
տրամադրությունը, գերմանական «Բերլիներ տադեբլատտ»
բուրժուական լրագրի նշանավոր աշխատակից Պ. Շեֆերը
գրում էր. «Յեթե—ասում էր նա 1929 թվի կեսերին.—հըն-
գամյակը հաջողվի թեկուզ միայն յերեք քառորդ մասով,
ապա կասկածից դուրս է, վոր սոցիալիստական մեթոդը
վերջնական հաղթանակ կտանի Յեվրոպայում»:

Պարոն Շեֆեր, բոլշևիկները իսկի յել չեն կասկածել
այդ մասին:

չորս հարյուր հազարանոց կոմյերիտմիութիւնը բողբեկէյա՛ն կոփւածք (զակակա) ե ստացել:

Արեւմուտքի աշխատավոր մասսաների քայքայման ու աղքատութեան հանդեպ պարզ աչքի յեն ընկնում Պորհրդային Միութեան հաշոյութիւնները: Սրանք մի ավելորդ տնգամ հաստատում են տնտեսութեան կապիտալիստական սխտեմի ամբողջ անճարակութիւնը, հաստատում են, վոր ճգնաժամը արդիւնք ե հասարակական բնույթ կրող աշխատանքի ե մասնավոր բնույթ կրող յուրացման, վորը հատուկ ե կապիտալիզմին՝ ե կապիտալիստական գյուղատնտեսութեան: «Արդիւնաբերական ճգնաժամը սերտ կերպով կապակցուի ե ազրարային ճգնաժամի հետ, դրութեան բարելավման ե վոչ մի նշան առայժմ չկա: Այդ ե ցույց ապրիս պաշարների կուտակման շարունակութիւնը: Այս տարի ցորենի համաշխարհային պաշարները մոտավորապես յերկու անգամ գերազանցում են յեղած կարիքը» («Պրավդա»):

Կապիտալիզմի պայմաններում հարյուր միլիոնավոր աշխատավոր գյուղացիներ դատապարտւած են լիակատար քայքայման, սովի ե աղքատութեան: Կապիտալիզմի պայմաններում այդ պրոցեսը պետք ե արագանա գյուղատնտեսութեան մեջ խոշոր կապիտալի զարգացմամբ:

Իսկ կառուցվող սոցիալիզմի պայմաններում աշխատավոր գյուղացիութիւնն ազատագրվում ե տգիտութիւնից, խաւարից, բռնում ե սոցիալիստական ճանապարհը, գնում ե դեպի լավագույն կյանքը: Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, մեքենայի շնորհիւ, մանր սեփականատեր գյուղացին ավելի շուտ ե դառնում իսկական սոցիալիստական աշխատավոր:

Այն ժամանակ, յերբ արեւմուտքում քայքայվում են աշխատավոր մասսաները, յերբ Պորհրդային Միութեան մեջ ավելի ե ավելի աճում ե աշխատավորների բարեկեցութիւնը, — ավելի ցայտուն ե դառնում տնտեսութեան սոցիալիստական սխտեմի առավելութիւնը, ավելի շեշտվում ե

աջ ուղորտունիստական այն «գրույթի» անճարակութիւնը, թե՛ պետք ե իջեցնել ինդուստրացման ե գյուղատնտեսութեան կոլեկտիւացման տեմպերը:

Կյանքը հոգս ցնդեցրեց Կոնդրատեի ու Չայանովի տիպի կուլակային «գիտնականների» պրոպագանդան, — «գիտնականներ», վորոնք ուզում եյին աշխատավոր գյուղատնականներին, վորոնք դարձնել դեպի կապիտալիստական զարգացման ճանապարհը, դեպի ստրկացման, շատական հագործման ե աղքատութեան ճանապարհը: Կոնդրատեն ու Չայանովը, արտահայտելով կուլակութեան կամքը, իրենց դասակարգի կամքը, փորձում եյին խանդաբել Պորհրդային Միութեան չքավորներին ու միջակներին՝ ընթանալու միակ ուղիդ ճամփով — գյուղատնտեսութեան զարգացման, համատարած կոլեկտիւացման ճամփով:

Կուսակցութիւնը, Լենինի պատգամներին հավատարիմ, թեորիայում ու պրակտիկայում ջարդ ու փշուր անելով ուղորտունիստներին, պոկում եր կուլակային գաղափարախոսութեան իստներին, պոկում եր կուլակային գաղափարախոսներին դիմակաները, ցույց եր տալիս, թե ինչ ե թագնված նրանց «քաղցր խոսքերի» տակ: Բանվորա-գյուղացիական մասսաներին դորահավաքելով դասակարգային թշնամուգեմպայքերիւ համար, կուսակցութիւնը տանում եր հաղթանակը հաղթանակի յետեից:

Ահա թե ինչու «առաջին հնգամյակի սոցիալիստական շինարարութեան կարևորագույն հանրագումարը հանդիսանում ե կապիտալիզմի արմատների վերջնական վռնչացումը գյուղում, վորով կանխորոշվում ե կապիտալիստական տարբերի լիովին վերացումն ե դասակարգի լիովին վռնչացումը:

ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հիմքի կառուցման ավարտումը նշանակում ե, թե լենինյան «ով ում» հարցը լուծված ե ընդդեմ կապիտալիզմի, հոգուտ սոցիալիզմի — թե քաղաքում ե թե գյուղում, լիովին ե անդարձ կերպով» (17-րդ կուսկոնքերենցիայում ընկ. Մոլոտովի ե Կուլբիշևի զեկուցումների, թեգիսներից):

Յեւ մեր հաջողությունները, վորոնք հեղափոխական պայքարի համար վոգեվորում են արեւմուտքի աշխատավոր-ներին, վորոնք հեղափոխականացնում են մասսաներին, ցույց են տալիս պայքարի, աղքատությունից և իրավազրկությունից դուրս գալու ճանապարհը—այդ հաջողություն-ները հետեւանք են բանվոր զասակարգի և աշխատավոր գյուղացիների ամենալայն մասսաների հեղափոխական ակտիվության հսկայական աճման, հետեւանք են սոցիալիս-տական մրցության և հարվածախնդրության վիթխարի վերել-կանության, վորը հետևողականորեն կիրառում և ամբողջ Ֆրոնտով ծավալված հարձակումը կապիտալիստական տար-րերի վրա» (17-րդ կուսհամագումարի թեզիսներ):

* * *

Ահա յերկու փաստ յերկու աշխարհից.—
Մասսաները դատում են և պիտի դատեն կապիտալիզ-մը: Ինչո՞վ կարող ե արդարանալ մեղադրյալը:
Լեհական ամենահին բուրժուական հրապարակախոսնե-րից մեկը, Ալեքսանդր Սվենտոխովսկին «Վարշավայի լրագիր»-ում (1931 թ. հուլիսի 21) գուցեղ կերպով պատկերաց-նում և լեհական գյուղացիների թշվառ դրությունը:

«Ով ուզում և տեսնել աղքատությունը, մերկե-րին, կմախքացածներին, տանջանքն և հուսալքումը, թող գյուղ գնա: Այնտեղ նա կտեսնի խավար, կեղ-տոտ, գարշահոտ վորջեր, վորտեղ ապրում են մարդիկ ված մարմինների վրա լաթեր են, այստեղ մարդկանց զենքերը պատած են թախիծով, վորոնց վրայից արագ չքանում և հազվագյուտ ժպիտը: Այստեղ դերեզմանա-յին լռություն և տիրում, վորը յերբեմն խանդավում և զայրույթի ձայներով, բայց ուրախության ձայ-ներով—յիրբեք: Արդեն յերկու տարի յես աշխատավոր մարդկանց մեջ չեմ լսել այն յերգերը, վորոնք մի ժամանակ լսվում էին դաշտերում ու խրճիթներում... Ինձ ծանոթ վայրում, վորը տասնյակ կիլոմետր տա-

րածություն ունի, չկան նույնիսկ 20 գյուղացիներ, վորոնք 50 դոտի (11 ուռբլի) խնայողություն ունե-նան... բնակչության մեծամասնությունն որական ու-տում և ընդամենը յերկու կամ մեկ անգամ, զլխավո-րապես զետնախնձոր... Գյուղում նույնպես կա գոր-ծադրկություն, վոր չի հաշված, չի ցուցակագրված, բայց և այնպես, մեծ և, չի ոգտվում հասարակա-կան ֆունդով և ուրեմն ավելի ծանր է»:

Այսպես և պատմում բուրժուական գրողը լեհ գյուղա-ցիների դրության մասին: Նա արդեն չի կարողանում թա-գնել կապիտալիստական շահագործման ծանր պատկերը:

Իսկ մեղանձւած, մեր յերկրամասում, Խորհրդային Միու-թյան մեջ: Նայեցեք կոլտնտեսականի աշխատավորակա-ն զրքույկը և դուք կտեսնեք, թե ինչպես տարե-ցտարի ա-ճում և աշխատավոր գյուղացիության բարեկեցությունը: Ահա ձեզ Միրոշին Նիկոլայի ընտանիքը: Միրոշինը շարժա-յին կոլտնտեսական և Արմավիրի ռայոնի «Արշալույս» կոլ-տնտեսության, վորը հաջողությամբ կատարել և արտադ-րական-տնտեսական պլանները:

Միրոշին Նիկոլայի ընտանիքը կոլտնտեսության մեջ համարվում և միջակ: Հինգ շնչից միայն յերկուսն են աշ-խատենալ: Միրոշինն իր կնոջ հետ աշխատելով դաշտային բրիգադներում, վաստակել և 350 աշխատանքային ուր, վորի համար յեկամուտները բաժանելիս ստացել է՝ 147 ուռբլի փող, 16 ցենտներ ցորեն, 6 ցենտներ յեզիպտացորեն և լիովին ապահովվել և բանջարանոցային կուլտուրաներով: Բնորոշ և հետևյալը. անցյալ տարի մեկ աշխատանքային ուրվան հասնում եր 35,2 կոպեկ, իսկ այս տարի—1 ուռբլի 7 կոպեկ, այսինքն անցյալ տարվա հանդեպ յեկամուտն ավելացել և յերեմ անգամ:

Մա անհերքելի փաստ ե

Բայց մենք հենց նրա համար ենք բողոքիկներ, վորպե-սդի չբավականանանք յեղած հաջողություններով, այլ ամ-րապնդելով այդ հաջողությունները, անցնենք առաջ: Վոչ թե փքվել, այլ զորահավաքելով մասսաների յեռանդն և

հենցդիսան, յեղած հաջողությունները հիմունքով ապահովել տեմպերի ամենորոյա ուժեղացումը:

Կուսակցությունն այսօր մի առանձին լրջությամբ և հաստատակամությամբ դրել է կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման խնդիրը: Կազմակերպչական-տնտեսական ամրապնդման հիմնական ողակ-հանգիստանում է աշխատանքի արտադրողականության բարձրացումը, աշխատանքի ձիշտ կազմակերպման միջոցով գործավարձի կիրառումը, դիմադրկության և հավասարանքի վերացումը: Այժմ կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման խնդիրներին չի կարելի մոտենալ այլ կերպ, քան կոլտնտեսություններում կիրառելով ընկ. Ստալինի վեց պայմանները:

Կոլտնտեսությունների նոր, մեծ հաջողությունները ցանքատարածությունների ղգալի ընդարձակումը, բերքատվության բարձրացումն անհատականների հետ համեմատած, հացամթերումների պլանի կատարումը հիմնականում — այս բոլորը արդյունք է կոլտնտեսությունների կազմակերպչական — տնտեսական ամրապնդման:

Այս օտրի կոյսնեստությունները հասան զարգացման ավելի բարձր աստիճանի: Ինչի արդյունք է սա — մեքենատրակտորային կայանների աշխատանքների ծավալման, գործավարձի և աշխատանքի, հաշվառքի, հացամթերումների պլանների կատարման և յեկամուտները միայն ըստ աշխուրների բաժանելու, կոլտնտեսություններում կուլակային աղբեցությունների, ինչպես և մանր սեփականատիրական տրամադրության դեմ մղած պայքարի:

Կուսակցության Յերկրային Կոմիտեն իր «Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման մասին» վորոշմամբ մի առանձին լրջությամբ դրել է կոլտնտեսությունների աշխատանքների հետագա մեքենայացման հարցը: Մինչև 1932 թվականի բերքահավաքման կամպանիան յերկրամասի բոլոր խոշոր գյուղերում պիտի կազմակերպվեն մեքենատրակտորային կայաններ: Մինչև

1933 թվականը նախկին Կուբանի շրջանի ուսյուններում վերջնականապես կավարտվի վարի, ցանքի և բերքահավաքի մեքենայացումը բոլոր կոլտնտեսություններում: Առաջիկա աշնան նախորդակից Հյուսիսային Կովկասի դաշտերում պետք է աշխատեն փոշ պակաս, քան 700 կոմբայն:

1300 ավտոմեքենա և 250 պիկկեր:

Կուսակցության Յերկրային Կոմիտեյի և Յերկրգործ-կոմի վորոշումը պարտավորեցնում է մանրացնել մոտ 500-600 ծուխ միացնող կոլտնտեսություն-գիգանտները, նրա համար, վորպեսզի ապահովվի կոլտնտեսական շինարարության հետագա ամրապնդումը:

Կոլտնտեսությունները մանրացնելիս պետք է մանրացած կոլտնտեսության ամեն մի բրիգադայում կազմակերպել կոմյերիտական բջիջ: Կոլտնտեսության բրիգադաների բջիջ-ները վրա պետք ձիշտ և հավասարաչափ բաշխել ախտի-ներին: Նոր կազմակերպված բջիջների ղեկավարությունը վին: Նոր կազմակերպված բջիջների ղեկավարությունը պետք է ուժեղացնել ամենալավ հարվածային կոմյերիտական-ներով:

Կոմյերիտության բրիգադային բջիջը պիտք է ծավալի մասնայական աշխատանք: Այս աշխատանքը պետք է նպաստի կոլտնտեսությունների մանրացման վերաբերյալ Յերկրկոմի, Յերկրգործկոմի ու Յերկրկոլտնտնության վորոշման խորն ուսումնասիրության: Նա պետք է նպաստի կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության կամուտները բաշխելու հիմունքով: Նա պետք է նպաստի յանապատնասական կամպանիայի նախապատրաստու-թյան դյուղատնտեսական կամպանիայի նախապատրաստու-թյան ժամանակ և վերաբերում են բերքատվության և աշ-խատանքի արտադրողականության բարձրացման:

Գարնանացանի ժամանակ պետք է վճռական պայքար ծավալել կոլտնտեսություններում գիմադրկության և հավա-սարանքի վերացման գործում ուսորտունիստական դիմա-դրության դեմ: Ըստ եյության այդ դիմադրկությունը

արտահայտում են ուղղորտունիստների հետևյալ փորձերն ու ձգտումները—«պաշտպանել» կոլտնտեսությունները պրո-
լետարական ղեկավարությունից, պրոլետարիատի կազմա-
կերպիչ ազդեցությունից: Յեւ կոլտնտեսություն կազմա-
կերպչական-տնտեսական ամրապնդման գործը, աշխատան-
քի կազմակերպումը կմնան իբրև դատարկ հնչյուն, դատարկ
խոսակցություն, յեթե չծավալվի իսկական պայքար
այդ ուղղորտունիստական դիմադրություն դեմ:

Համամիութենական կենտրոնական Գործադիր Կոմի-
տեյի յերկրորդ նստաշրջանը 1932 թվին գյուղատնտեսու-
թյան առաջ դրել է մի լուրջ խնդիր—պայքարել բերքա-
տվության բարձրացման համար, պայքարել կորստների
դեմ: Պլանի համաձայն, հացահատիկային կուլտուրաների
բերքատվությունը պետք է բարձրացնել յոթը—ութը տո-
կոսով: Այս խնդիրն անհնարին է կատարել առանց ոգտա-
գործելու բերքի բարձրացման բոլոր ագրոտեխնիկական
միջոցառումները:

Մեզ հարկավոր է ափսոսանքով ամեն մի կոլտնտե-
սության համար, հարկավոր է կազմակերպված պայքար
մղել գյուղատնտեսության կորստների դեմ, հարկավոր է
սպառազինվել՝ յերաշտի դեմ կռվելու համար: Յեւ ճիշտ են
վարվում «Կրասնայա Պոլյանա» գյուղի բլիզադների բջիջնե-
րը, յերբ հենց այժմ ձյունապահի աշխատանքներ են կա-
տարում և կոլտնտեսության վարչության առաջ հարց են
դրել, վորպեսզի պլանում նախատեսվի, թե ինչքան բան-
վորական ույթ է հարկավոր վորոշ տարածությունը հողա-
մասերի վրա չոր քամիներից պաշտպանելու համար անտա-
ռատունկի աշխատանքներ կատարելու:

Մինչև գարնանացանի կամպանիան ագրոտեխնիկային
տիրապետելու հարցը վճռական նշանակություն է ստանում:
Այս բանը լավ են հասկացել Նեվիննոմիսկի «Լենինյան
ուղի» կոլտնտեսության կոմյերիտականները, վորոնք յեր-
կրամասի կոմյերիտականներին ուղղած նամակում գրում
են.—

«Մենք, «Լենինյան ուղի» կոմյերիտական կոլոսե-
սականներս, պե՛սք է բուլեվիկորեն պայքարենք մե-
ղացների բերքի կեկնապասկման յեվ րեկ. Յակովլեվի
ցուցմունքներն իրագործելու համար: Մենք առաջարկում ենք
յուրաքանչյուր կոմյերիտականի համար մեկնել պարտադիր
կարգով ագրոնոմպարսու: Մենք չենք ցանկանում ունենալ
նարյուրավոր փուլք հացահատիկների կորուստ, վոր յիկում է
եմոհիվ մեք ագրոտեխնիկական անգրագիտության յեվ կոլեկ-
տիվ գյուղատնտեսություն վարելու յիովին հնարավորությունները
ոգսագործելու անկարողության:

Մարտականորեն և իր ժամանակին նախապատրաստ-
վել և անցկացնել գարնանացանը, անկադմակերպություն և
թափթփվածության պատճառով արվող ծախքերն իջեցնել
ամենաքիչ չափի: Դա նշանակում է ապահովել հնգամյակը
չորս տարում կատարելու հաջողությունը, ապահովել աշ-
խատավոր մասսաների բարեկեցության հետագա աճումը,
ամրապնդել կոլտնտեսությունները, բուլեվիկյան պայքարի
և հաստատականության նոր որինակներ ցույց տալ համաշ-
խարհային պրոլետարիատին:

Իրագործելով ստալինյան վեց պայմանները, վճռական
պայքար մղելով գործավարձի համար (վորովհետեւ «Երբե-
հիմնական խնդիր է մնում աշխատանքի բոլոր մասնաճու-
ղերում գործավարձի փաստական կիրառումը և նրա հիմուն-
քով յուրաքանչյուր առանձին կոլտնտեսականի աշխատան-
քի գնահատումն աշխուրդով, — այսինքն անհատական,
ուղղակի գործավարձի կիրառումը), պայքարելով հավասա-
րանքի և դիմադրկության դեմ, գարնանացանի նախապա-
տրաստության և անցկացման գործում, մենք կապահովենք
հաղթանակը: Այժմ հարկավոր է գորահավաքել անցյալ
տարվա փորձը, աշնանային ու գարնանային կամպանիայի
փորձը, հմուտ կերպով ոգտագործել այն և հարվածայնու-
թյան ու մրցության հիմունքով, ցուցաբերելով յերիտա-
սարդությանը, ավելի լավ ոգնել կուլակցությանը հըն-
գամյակի չորրորդ, ավարտական տարվա գարնան, բուլեվիկ-

յան յերրորդ, վճռական դարձան ցանքսային պլանների կատարման պայքարում:

ԹՇՆԱՄԻՆ ՓՈԽՈՒՄ Ե ԻՐ ՏԱԿՏԻԿԱՆ

Արդյոք կոլտնտեսություններում կան դասակարգային պայքարի տարրեր: Այո, կան: Կոլտնտեսություններում չեն կարող չլինել դասակարգային պայքարի տարրեր, յերբ այնտեղ դեռևս պահպանվում են անհատականության կամ նույնիսկ կուլակային հոգեբանության մնացորդները, յերբ այնտեղ դեռևս կա վորոշ անհավասարություն:

Տասնյակ ու հարյուրավոր նոր կոլտնտեսականներ մտել են կոմյերիտմիության գյուղական կազմակերպության մեջ: Կուսակցության ղեկավարությունում և ոգնությունում կոմյերիտմիությունն այս նոր կադրերին դաստիարակում է գործնական աշխատանքի ընթացքում, նրանց բերե լենինյաններ—բոլշևիկներ և դաստիարակում դարձնում նացանի տեմպերի ու վորակի համար մղվող անմիջական պայքարում և այն պայքարում, վոր մղվում է կոլտնտեսությունների կադակերպչական-տնտեսական ամրապնդման վերաբերյալ Ֆերկրկոմի վորոշումը կատարելու համար: Կոլտնտեսությունների մանրացումը, ամենակարճ ժամանակամիջոցում անցյալ տարվա յեկամուտների բաշխման (ըստ աշխորերի) ավարտումը, Ստալինյան վեց պայմանների հիմունքով աշխատանքային դիսցիպլինայի հետագա ուժեղացումը—անհ յուրաքանչյուր բրիգադային բջիջի կենտրոնական խնդիրը:

Այս խնդրի իրագործումը նպաստում է յերիտասարդության մասնանների դասակարգային, բոլշևիկյան դաստիարակության: Դասակարգային թշնամու դեմ մղվող կռիվներում նորեկը բոլշևիկի կօփվածք կստանա: Հարձակվելու, կուլակին հարվածելու, կուլակային թափթփուկներին հար-

յածելու, կոլտնտեսական շինարարության վիժեցման թըշնամու փորձերը ջախջախելու համար պետք է գիտենալ թշնամու տակտիկան, նրա պայքարի ձևերը, պետք է գիտենալ, թե թշնամին վորտեղ, ինչպես և ոգտագործելու իր վերջին հնարավորությունները:

Ջարդված թշնամու պայքարի ձևերը բազմազան են: Կոլտնտեսականների լավագույն հարվածայինների դեմ տերրորիստական յեղաթյուններից սկսած մինչև լպիր բաժաասանքը, ստոր ֆլասարարությունն և կոլտնտեսական բըրիգադները քայքայելը—այս բոլորն ոգտագործում է թըշնամին ընդդեմ կոլտնտեսական շինարարության:

Թշնամին իր տակտիկան փոխում է յեղած դրության համաձայն: Կոլտնտեսություններն ստեղծվելիս թշնամին ուներ մի տակտիկա: Դա վախեցնելու, կոլեկտիվ տնտեսություն մասին առասպելներ տարածելու տակտիկան եր: Հիշեցեք, ամեն մի լրագիր հետևյալ տեսակի լուրեր եր հագորդում:

«Ուրուպակայա գյուղում (Արմավիրի ռայոն) կուլակները զինված հարձակում են կազմակերպել կոմյերիտական ակտիվիստ Դուրնյատկինի վրա:

«Տիխարեցկու ռայոնում, Դոնո-Սոպերսկայա գյուղի յենթակուլակները ձեծել են կոլտնտեսուհի Աբաղուկային: Ոտրադնայա գյուղում կուլակի տղան վիժեցրեց ագրուկուրների պարապմունքները: Նովո-Մալոբոսիսկի կուլակներն այսպիսի ագրոտացիա յին մղում, —չքավորներ, մի մտնեք կոլտնտեսություն, այնտեղ ճորտատիրական իրավունք կա»:

Ինչպես տեսնում եք, կուլակության հիմնական տակտիկան վախեցնելն եր, բամբասանքների տարածումը և կոլեկտիվ տնտեսության դեմ մղած ագրոտացիան:

Այժմ հիմարություն կլինի խոսել կոլտնտեսության անողտակարության մասին, յերբ յերեկվա անհատականը, անողտակարներ չի տեսած, վորը մինակ տնտեսավա-վորը հեռանկարներ չի տեսած, վորը յերազել իր կուլության պայմաններում չեր ել կարող յերազել իր կուլության ու նյութական դրության բարելավման մասին,

կոլտնտեսութեան մեջ աշխատելու հենց առաջին որերից, միասին, ձեռք ձեռքի տված աշխատելուց հասկացավ, տեսավ իր աճման ու զարգացման հեռանկարները:

Դյուղասնեստութեան մեքենայացումը, հեռացրած աշխատանքը, կուլտուրական սպասարկումը, ՄՏԿ կողմից ագրոնոմիական ու կազմակերպչական ոգնությունը կոլսնեստություններին—սա յեվ իրականությունը ե յեվ հեռանկար, վոր վերջնականապես վոյնչացեւ ե կապիտալիզմի աւմասները գյուղում:

Անցած կոլտնտեսական տարին ցույց տվեց, վոր կոլտնտեսականների նյութական յեկամուտը զգալի չափով բարձր ե անհատականների յեկամտից: Որինակի համար, Նեվիննոմիսսկի ռայոնի «Լենինյան ուղի» կոլտնտեսութեան անդամ, կոմյերիտական կրավչենկոն, ուսննալով յերկու աշխատունակներ, վաստակեց 595 աշխուր: Նրա ընտանիքը բաղկացած ե յերեք շնչից: Նաստանում ե 7 ցենտներ 14 կիլոգրամ ցորեն, 5 ցենտներ 17 կիլոգրամ յեգիպտացորեն, բանջարանոցային մթերք ե 131 ռուբլի փող: Իսկ յերբ նա անհատական եր, նրա հացը յերբեք ձմեռը չեր բավակաւնանում:

Ջարդված կուլակը գիտե, վոր համատարած կոլեկտիվացումը կանգնեցրեց գյուղի շերտավորումը, վոր նրա, կուլակի ուլթն ե ազդեցութունը վոչնչանում են համատարած կոլեկտիվացմամբ: Ահա թե ինչու կուլակը պայքարի նոր մեթոդներ ու ձևեր ե փնտռում ե իր ագինտուրայի—աջ ոպորտունիստների, ինչպես ե կորգիչների ու թամբալների ոգնութեամբ ձգտում ե ապացուցիլ ե նսեմացնել կոլտնտեսական արտադրութեան առավելութունները:

Իհարկե կուլակը հին մեթոդներից ել չի հրաժարվել—սպառնալիքներից, վախեցնելուց ե սպանութուններից: Սակայն այժմ նա գլխավորապես հենվում ե առանձին կոլսնեստականների մանր-բուրժուական իլլեյոյդիայի մնացորդների վրա: Նա փորձում ե առանձին կոլսնեստականների անհատական, անձնական ժանիքը առհեսականորեն հակադրել

ամբողջ կոլսնեստութեան ժանիքին: Կոլտնտեսութուններու զասակարգային պայքարի տարրերը կենտրոնացված են գլխավորապես կոլտնտեսութունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման շուրջը, Ստալինյան վեց պայմանների, աշխատանքի արտադրողականութունը բարձրացնելու շուրջը:

Դեպի մեքենաներն անտնտեսավարի վերաբերմունքի փաստերը, բերքահավաքման ժամանակ հացահատիկների մեծ կորուստները, առանձին կոլտնտեսութունների կողմից պետութեան հանդեպ վերցրած պարտավորութունները ժամանակին չկատարելը, կուլակային, կորգողական տրամադրութունները—սրանք ջարդված կուլակութեան, մնացորդների, կուլակային թափթփուկների աշխատանքի արդյունքն են, սա արդյունք ե այն հանգստմանքի, վոր առանձին ղեկավարներ ընկել են ոպորտունիզմի ճահիճը:

Յեւ նրանք, ովքեր մոռանում են, ովքեր ոպորտունիստորեն թերազնահատում են այս հանգամանքը, վոր դեռ շատ աշխատանք պիտի թափել գյուղացու մանր-սեփականատիրական իդեոլոգիան վերափոխելու համար—նրանք բռնում են բանվոր զասակարգի շահերին դավաճանելու ճանապարհ:

Տեմբերգոսկի կոլտնտեսութեան մեջ առանձին կոլտնտեսականներ մոլորվեցին կուլակների ասե-կոսներից ե սկսեցին առաջին հերթին ապահովել իրենց, ապահովել ապեցուկ պահելով: Արդյունքն այն յեղավ, վոր պետութեան առաջ վերցրած պարտավորութունները չկատարվեցին, վոչ թե այն պատճառով, վորը հացը չեր բավականանում, այլ վորովհետեւ այդ հացը գողացվեց, ծախժխվեց կամ մնաց տափաստանում:

Կուլակը սողոսկում ե կոլտնտեսութունները ե, ոգտվելով մի քանի աշխատողների ինքնահոսային տրամադրութուններով, փորձում ե կոլտնտեսութունը վոչ թե ինքը անմիջապես քայքայել, այլ մեծ մասամբ այդ անել

իր կողմնակիցներին, իր գործակալութեան—ոպորտունիստներին, կորդիչներին ու թամբալներին միջոցով:

Կուլակն այժմ փորձում է կոլտնտեսային արտադրութիւնը այնպես «կազմակերպել», վորպեսզի ապացույցի միասին աշխատելու քիչ ոգտավետութիւնը կոլտնտեսութեան մեջ:

Գարնանացանի կամպանիայի ժամանակ ևս կուլակը ցույց կտա իր մոռութիւնը, նա դուրս կգա և այժմ էլ դուրս է գալիս գործավարձի դեմ: Նա դիմադրկութիւն և հակասութիւն է կրողը: Նա աշխատում է իջեցնել աշխատանքի վորակը և խոչնդոտում է աշխատանքի արտադրողականութեան բարձրացման: Իսկ աշխատանքի արտադրողականութեան բարձրացումն այժմ հանդիսանում է գլխավոր ողակը վորին կապված է կոլտնտեսութիւնների կազմակերպչական տնտեսական ամբալնդման ամբողջ շղթան:

Կոլտնտեսական արտադրութեան մեջ անսահման բարձրացել է յերիտասարդութեան դերը: Կոմյերիտմիութեան ղեկավարութեամբ յերիտասարդական հարվածային բրիգադները նախաձեռնողներ են հանդիսանում ընկեր Ստալինի վեց պայմանների կադարման. գործավարձի, կոլտնտեսային աշխատանքի բարձր արտադրողականութեան համար մղվող պայքարում: Անցյալ գարնանացանի ժամանակ ևս առանձին ճակատամարտում յերիտասարդութիւնը վճռում էր ցանքի բախտը:

Թշնամին հաշվի առալ այս հանգամանքը: Յեկ նա վերջին ժամանակներս առանձնապես փորձեր է անում նրվաձեկ յերիտասարդութեան վստահութիւնը, նա ուզում է իր աղղեցութեան յենթարկել յերիտասարդութեանը: Այստեղ բից: Կրասնո-Պոլյանսկու գյուղխորհրդի Բոլխաչի գյուղում Յերեմին Տերենտին, նախկին տրակտորատերը, ժողովում, վորտեղ դրված էր հանդիպական պլանների և հարվածային աշխատանքի հարցը, հետևյալ «ճառն» ասաց.—

— «Լավ, ինչո՞ւ հարվածայնորեն աշխատել, ինչո՞ւ

շատ մեծ բեռան տակ մտնել. դուք ջահիլներ եք, կյանքը կանցնի, չեք տեսնի»: Դիմելով կոմյերիտմիութեան ռայկոմի ներկայացուցչին, ասաց, — «Հարկավոր չէ չարչարել մեր յերեխաներին, յերիտասարդութեանը, նրանց ինչի՞նչ է պետք հարվածել, նրանք ջահել են, թող աղջիկների հետ սիլի-բիլի անեն»:

Այդ նույն ժողովում ներկա գտնվող, Յերեմինի նախկին բատրակը կոլտնտեսականի դիմակը անտուեց նախկին տրակտորատիրոջ յերեսից և ժողովի պահանջով Յերեմինը վճռվեց կոլտնտեսութիւնից:

Վարովսկոիսկի գյուղի յեկեղեցականները կազմակերպեցին աստվածաշունչն ուսումնասիրող խմբակ: Այդ ուսումնասիրութիւնը կայանում էր նրանում, վոր ներկա յեղողները հրահանգ եյին ստանում, թե ինչպես պետք է աշխատել կոլտնտեսութեան մեջ: Հասկանալի յե, վոր այդ հրահանգները դեմ եյին գործավարձին, հարվածային աշխատանքին: Նույնպիսի խմբակներ, բայց արդեն ուրիշ անունով, կազմակերպվել են և Վեչեսկու և Ուտրադնենսկու ռայոններում: Այդ խմբակներում մարդկանց ներդրավել կատարվում էր սովորաբար կուլակային յերիտասարդութեան կողմից:

Յերիտասարդութեան առանձին խմբակներին իր աղղեցութեանը յենթարկելու թշնամու փորձերը կոմյերիտական կազմակերպութիւնից պահանջում են բարձրացնել դասակարգային արթնութիւնը, քաղաքական մեծ աշխատանք ծավալել և դաստիարակել յերիտասարդութեանը գործնական աշխատանքում, կազմակերպչական տնտեսական ամբալնդման մարտերում, գարնանացանի պլանի քանակական և վորակային կատարման հիմունքով:

Պետք է հիշել, վոր «միայն անուղղելի ոպորտունիստը կարող է մտածել, թե սոցիալիստական հասարակութիւնը կկառուցվի ինքնահոսաբար, առանց պայքարի, առանց պրոլետարիատի և նրա ավանգարդի բոլոր ույժերի կարման, առանց բոլոր միջոցների ու կարողութիւնների

գորահավաքման: Միայն «դասակարգային հարմոնիայի» քաղցրախոս յերգիչները և խաղաղ ներաճման տխրահույս թեորիայի կողմնակիցները կարող են մտածել, վոր ԽՍՀՄ-ում դասակարգային պայքարն արդեն հանդարտել է և վոր դասակարգային պայքարի բոլոր հարցերն արդեն կարող են հանվել որակարգից» («Բոլշևիկի» № 19-20-ի առաջնորդող):

Այս տարվա դարնանը ցանված հեկտարների քանակն ու վորակը պիտի ցույց տան, թե ի՞նչ չափով յուրաքանչյուր կոմյերիտական, ամեն մի բրիգադային բջիջ, ամեն մի կոմյերիտական ողակ կարողացել է ղորահավաքել յերիտասարդությանը՝ կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման ասպարիզում կուլակների գիմադրությունը փշրելու և կոլտնտեսական աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար:

ՊԼԱՆԸ ԿԿՐՔԱՏԻ ՅԱՆՔԻ ԺԱՄԿԵՏԵՐԸ

Կոլտնտեսության ճշգրիտ կառուցված աշխատանքային պլանը, վոր քննարկվում և լրացվում է կոլտնտեսային ժողովներում, հասցվում է յուրաքանչյուր բրիգադին, մշակվում բրիգադների ժողովներում, մի պլան, վորով յուրաքանչյուր կոլտնտեսական առաջուց պիտի դիտենա, թե յի՞րբ, վո՞րտեղ, ո՞ւմ հետ և ի՞նչ աշխատանք պիտի կատարե, — այսպիսի պլանը կապահովի ցանքի հաջողությունը և կկրճատի նրա ժամկետերը:

Այն պլանը, վորը նախատեսում է գործավարձի ճշգրիտ կիրառումը, դիմադրելության վերացումը՝ սկսած՝ հողամասերը, լծկանը և մարդկանց ամրացնելուց, այն պլանը, վորն առաջուց հայտնի յե կոլտնտեսականին, դա գործողությունների ստուգված և պատրաստի ծրագիր է և ապահովում է ցուցանիշների վոչ միայն քանակական, այլ և վորակային կատարումը:

Ինչո՞ւ անցյալ տարի վորոնցով-Ալեքսանդրովսկի աշտոնը աշնանացանը վերջացրեց ժամկետից առաջ և դեռակատարեց առաջադրությունը: Դրա վճռական մոմենտներից մեկն այն էր, վոր պլանը վերակառուցվեց Ստալինյան վեց պայմանների հիմունքով, կազմվեց ու ստուգվեց յան վեց պայմանների կողմից: Ռաշտում կոմյերիտական բրիգադան կազմակերպեց կոլտնտեսության աշխատանքային պլանների կազմման և կոլտնտեսականների ժողովներում մշակվելու մասսայական ստուգում:

Այդ բրիգադներն առանձին ուշադրություն դարձրին աշխատանքի կազմակերպման, քարշող ույժն և մարդկանց վորոշ հողամասերի ամրացնելու, դիմադրելության վերացման և գործավարձ մտցնելու, վրա: Բրիգադները հետաքրքրվում էին մշակույթի նորմաներով և աշխատում էին այնպես անել, վոր նորմաները վորոշելիս կոլտնտեսությունը հավասարվի հարվածայինի տված մշակույթին:

Յեվ հենց այստեղ բրիգադներն ոգնում էին Վոլտենտեսության վարչությանը, հայտնաբերված պակասությունները վերացնելու համար: Բրիգադները կոմյերիտական ույժերը նստում էին ամենաթույլ ճակատամասերը:

Ահա մի որինակ: Ստուգման ժամանակ պարզվում է, վոր ինվենտարն ու ձիասարքը չեն ամրացված վորոշ բրիգադներին, վորոշ հողամասերին, իսկ յեթե ամրացված են, ապա անսարք են և բրիգադիրը ծանոթ չե նրանց դրության: Կոմյերիտականների ոգնությամբ անցկացվեց հաշտեղի ունեցավ վերանորոգումը: Այս աշխատանքների համար կոմյերիտականները մի քանի հարվածային բրիգադներ կազմակերպեցին:

Ստուգումն այն արդյունքը տվեց, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական հիմնականում գիտեր իր տեղն աշխատանքների ժամանակ:

Նույնպիսի ստուգում անցկացրեց «Արմավիրսկայա կոմունա» լրագրի յերիտասարդական եջը: Այս ստուգումը

գործն առաջ մղեց և սկսեցին կազմվել արտադրական պլանները, տեղի ունեցավ ինվենտարի վերանորոգումը, քարշող ուլթի նախապատրաստութունը գարնան համար:

Այն պլանը, վորը չի քննված կոլտնտեսականների մասնաներում, վորի մեջ չի ընդհանրացած ամբողջ կոլտնտեսության փորձը, վորը չի հասցրած մինչև բրիգադ, — դա թղթային պլան է:

Անցյալ տարի Պավլովսկի ռայոնում ցանքի ձգձգման պատճառներից մեկը այն եր, վոր կոլտնտեսութուններում ժամանակին չկազմվեցին արտադրական պլանները: Սրանք չհասցվեցին ամեն մի բրիգադա: Այս ռայոնում բացառութուն եյին կազմում Նովո-Պլաստունովսկի և Նովո-Պլատնիրովսկի կոլտնտեսութունները, վորտեղ ցանքը հաջող անցավ այն պատճառով, վոր բրիգադային բջիջը սկսեց վաղորոք պատրաստվել գարնանացանին, պլանը հասցրվեց մինչև ամեն մի կոլտնտեսական, կազմակերպվեցին ինվենտարի վերանորոգման հարվածային բրիգադներ, յերիտասարդական ախոռ (ձիերի), ստեղծվեցին մի քանի լըջիկ դարբնոցներ: Այստեղ աշխատանքի վորոշ ճակատամասերի ամրացվեցին կոմյերիտականներ: Ուլթերը ճիշտ դասավորվեցին:

Պլանները կազմելու և նրանց մինչև բրիգադները հասցնելու գործում ոգնել վարչության—ահա ամեն մի բրիգադային բջիջի և ամեն մի կոմյերիտականի անմիջական խնդիրն և պարտականութունը: Ոգնություն հասցնելով հանդերձ, պետք է ուժեղ հարվածել պլանի ռպորտունիստական թերափնահատության, գործավարձը խեղաթյուրելու և թագնված դիմադրկության ու հավասարանքի առանձին փաստերին: Յերը, որինակի համար, պլանի մեջ աշխատանքները դնահատվում են գործավարձի հիման վրա, իսկ բրիգադները չեն ամրացված հողամասերին, չի կատարվել քարշող ուլթի և ինվենտարի ամրացում: Պետք է հետևել, վոր պլանում նախատեսվեն աշխատանքի վորակի հարցերը, աշխատանքի վարձատրությունը վոչ միայն այն հիմուն-

քով, թե ինչքան գործ է արված, այլ և ինչպես է արված:

Պատահական չէ, վոր կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման մասին յերկրային կազմակերպությունների վորոշումը լուրջ ուշադրություն է նվիրում կոլտնտեսության արտադրական-ֆինանսական պլանի կազմելուն և այդ պլանը մինչև բրիգադ, մինչև կոլտնտեսականը հասցնելուն:

Յուրաքանչյուր կոլտնտեսային, բրիգադային բջիջ, մասնակցելով արտադրական-ֆինանսական պլանների կազմելուն, Արմավիրի կոմյերիտականների որինակով (գ.գ. Վոյնոյե, Կրասնայա Պոլյանա, Ն. Կուբանսկայա), պարտավոր են հաջողեցնել ռացիոնալիզացուական պլանի կազմելը կոլտնտեսութուններում: Անցյալ տարի Վոնինսկի կոմյերիտականները ռացիոնալիզատորական պլանը կազմելիս յեղակեա ունեցան կոլտնտեսականների ռացիոնալիզատորական առաջարկները: Որինակ, փորձնական հողամասերում կատարված աշխատանքը ցույց տվեց, վոր լրանջարանոցային տնտեսության մեջ 25 կիլոմետր վոռոգման թմբերի կառուցման աշխատանքը ձեռքով եր կատարվում և հազին բանվորական ուլթ եր պահանջում: Կոլտնտեսականների առաջարկով, փորձեցին այստեղ ոգտագործել գութանները: Թմբերի բարձրությունը դուրս յեկավ նորմալ—75 սանտիմետր: Սա տվեց 50 տոկոսով բանվորական ուլթի խնայողություն: Այժմ, կոմյերիտականների պահանջով, այս յեկ սասնյակ ուրիշ առաջարկները մեցված են պլանի մեջ յեկ բնդունված են կոլոնետուրյան վարչության կողմից, բնթացիկ տարում պատրաստվել կերպով կիրառելու համար:

Կոմյերիտական կազմակերպությունը պարտավոր է այժմ կազմակերպել յերիտասարդական բրիգադներ, յերիտասարդական հողամասեր նշել, ապահովել կոմյերիտականների ուղիղ բաշխումը ամբողջ բրիգադայի վրա:

Առաջավոր ռայոնների որինակով, հարկավոր է կոլտնտեսություններում առանձնացնել ընդորինակելի, ցու-

ցաղրական հողամասեր, վորտեղ պիտի աշխատեն կոմյերիտական հարվածային բրիգադները: Այստեղ պետք է արինակ ցույց տալ, թե ինչպես պետք է կռվել Ստալինյան վեց պայմանների կատարման համար, աշխատանքի արտագրողականութան բարձրացման, գործավարձի համար և դիմագրկութան ու հավասարանքի դեմ:

Վարանցովո-Ալեքսանդրովսկի ռայոնի դաշտերում աշխատում էին 84 կոմյերիտական-յերիտասարդական բրիգադներ: Յերիտասարդ ենտուզիաստները, չնայելով ծաղրանքներին, ցույց տվին դեպի աշխատանքը սոցիալիստական վերաբերմունքի օրինակներ: «Իսկրա» կոլտնտեսության № 3 բրիգադը բացառապես յերիտասարդներից էր բաղկացած: Բրիգադայում կային 14 հոգի ջահել տղերք: Մեկ բուկկերի որական պլանը 1,5 հեկտար էր, իսկ նրանք ժապում էին 2,5 հեկտար: Տափանելու նորման 5,5 հեկտար էր, իսկ բրիգադան որական տափանում էր 7-8 հեկտ:

Ինչո՞ւմ է 3-րդ բրիգադայի կոմյերիտականների հաջողութան գաղտնիքը: Նախ, բրիգադան յուրաքանչյուր աշխատողի ամբարանի ետ աշխատանքի վորո՞ւ մասի, յեկորդ, աշխատանքային որերը գրելիս յեղակետ էին ունենում վոչ թե աշխատած ժամերը, այլ կատարված աշխատանքի քանակն ու վորակը:

Նույնպիսի հաջողություններ ձեռք բերին նաև «Կրասնայա Պոլյանա» գյուղի բրիգադաները: Այստեղ, վորպես արժեքավոր փորձ, պետք է մատնանշել, վոր տեղի յեյին ունենում տասնորյակը մեկ անգամ փորձի փոխանակման խորհրդակցություններ, վորոնք զանազան մասնաճյուղերում հրավիրվում էին կոմյերիտական բրիգադային բջիջների կողմից: Որինակ, լուծ քշողների, գոթանավորների ու ցանվորների հրահանգչական խորհրդակցություններ: Բրիգադիրներին և հաշվառողներին հրահանգներ էին տրվում:

Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է ոգտագործել աշխատանքանի կամպանիայի հարուստ փորձը հանդիպական

պլանների ասպարիղում: Դա՞ւսե՞րում հերքային—հանդիպական պլանները—դա Հյուսիսային Կովկասի կոմյերիտային մեծ նախաձեռնությունն է, վորը վնուական դեր խաղաց 1931 թվականի աճանացանի կամպանիայում:

Ի՞նչ բան է հիշված պլանը և ի՞նչպես պիտի նա անց կացվի բրիգադայում:

Մեր տնտեսությունը պլանային տնտեսություն է, Դրանումն է նրա առավելությունը տնտեսավարման կապիտալիստական սիստեմի հանդեպ: Հնգավակներին, տարեկան, յեռամսյակային և ամսական պլանների կազմելուն մասնակցում են բանվորական և կոլտնտեսական մասսաները: Նրանք ուղղումներ ու փոփոխություններ են մտցնում տեպերի ու վորակի բարձրացման, բոլոր ներքին միջոցների զորահավաքման ուղղությամբ:

Տնտեսավարման սոցիալիստական սիստեմն իր մեջ բովանդակում է անսահման հնարավորություններ, վորոնց ղժվար է նախատեսել նաև ամսական պլանում: Յեվ կոլտնտեսականները, արդյունաբերության բանվորների որինակով, կոմյերիտականների նախաձեռնությամբ, համակոլտնտեսական պլանի հանդեպ ամեն որ առաջադրում էին հանդիպական պլաններ:

Որինակ, աշխատանքն սկսվելուց առաջ ստանալով 12 հեկտար ցանելու առաջադրություն, ողակն առաջադրում է հանդիպական նորմա—ցանել վոչ թե 12, այլ 14 հեկտար: Յեվ, հարվածայնության ու մրցության հետևանքով, Ստալինյան պայմանները կատարելու և դեպի ինվինտարն ու լծկանն բանեցած լավ վերաբերմունքի շնորհիվ հանդիպական պլանը գերակատարում են: Այս դեպքում յուրաքանչյուր ողակ մրցում է վոչ միայն քանակության, այլ և աշխատանքի վորակի համար:

Թե հերթային հանդիպական պլանը վորք է ոգնում հաղթանակը տանելու համար, կարելի յե դատել Ալեքսանդրովսկայա գյուղի յերիտասարդական բրիգադայի օրինակով: Բրիգադան, վիշելով խոչնդոտներն և ոպորտունիստական

դիմադրությունը, ուշադրություն չդարձնելով ծաղրանքների վրա, կարողացավ տալ աշխատանքի բարձր ցուցանիշներ, կարողացավ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:

Գյուղի «Հեղափոխության ակիք կոլտնտեսության մեջ ինքնահոս եր տիրում և այս պատճառով կոլտնտեսությունը ռալոնում յետաճանցներից մեկն էր: Ցանքի պլանները չեյին կատարվում: Կոմերիտական կոլեկտիվը մի լավ մտածեց, թե ինչպես ապացուցել վարչության անդամներին, վոր կարելի չե աշխատել թե ավելի արագ և թե ավելի լավ և վոր պլաններն ու նորմաները միանգամայն իրագործելի չեն:

Վորոշեցին յերիտասարդական բրիգադա կազմակերպել: Անկուսակցական հարվածային, կոլտնտեսական շրջակեր Ֆիլկովը բրիգադային բլիճի ժողովում զորս դու պատվիրեցեր հարձակվում եր վարչության ներկայացուցչի վրա:

— Դու մի ասա, թե ինչ դուրս կգա: Եդ մեր գործն ե: Դու մեզ տուր հողամաս, տուր ինվենտար, ձիեր, ահա եդ ժամանակ կտեսնենք վոնց կլի:

Յեվ, ինչքան ել վարչության ներկայացուցիչը չեմ ու չում արեց, վերջը ստիպված յիղավ համաձայնվել: Յերիտասարդական բրիգադայի կազմակերպման համաձայնությունն ստացվեց: Յերբ տեսան, վոր բրիգադային բլիճը լուրջ կերպով ե գործի կպչել, հողամաս տվին: Այդ հողամասն ամենավատն եր: Պինդ ու անհարմար հողը վատ պայմաններ եր տրամադրում վարի ու ցանքի համար: Բայց արի ու տես, վոր նորման ել տրվեց մեկ ու կես հեկտար մի բուկկերին, ինչպես և փափուկ հողերի վրա:

Հատկացված եյին ամենավատ ձիերը: Ինվենտարը քաղված եր, անսարք: Վարչության մարդիկ քթների տակ ծիծաղում եյին ու ասում.

— Լավ ինվենտարով ու լավ հողի վրա տատու ել գործ կանի: Տղամարդ եք, վատով աշխատեք: Չե՞ վոր դուք ձեր կամքով եք սկսել: Դե փորձեցեք:

Առաջին որերում դժվար եր: Ծաղրանքների տարափի տակ կոմերիտական բրիգադան նորման չեր կատարում մեկ քառորդ և ավելի հեկտարով:

Այս մասին վոմանք չարախինդ կերպով եյին խոսում, վոմանք ել անհանգիստ: «Արդյոք պարզերես կլինեն» տղերքը, ամոթով չեն՝ մնա: Յեվ ահա, շնորհիվ ամենորյա արտադրական խորհրդակցություններին, վորոշեցին առաջին հերթին առողջացնել քարշող ույժը: Սրան ամրացրին վորոշ մարդկանց: Ձիապանի աշխատավարձը ուղղակի կախման մեջ դրին ձիու կատարած աշխատանքից: Ձիերը նեկատելի կերպով սկսեցին առողջանալ: Այդ ժամանակ բրիգադան բաժանվեց խմբակների: Ամեն մի խմբակ առաջադրեց հանդիպական պլաններ և աշխատանքից առաջ կամ վերջում քննում ու փնտրում եր պլանը չկատարելու կամ թերակատարելու պատճառները:

Առաջին հաղթանակ: Բրիգադան վարում ե մեկ ու կես հեկտար: Խնդիր ե դրվում վարել յերկու հեկտար: Ույժերի վերադասավորությամբ այս առաջադրությունը կատարվում ե: Առաջադրվում ե հանդիպական պլան—յուրաքանչյուր բուկկեր պետք ե վարի յերկու և կես հեկտար: Յեվ բրիգադան, կրճատելով ժամանակը, կարողացավ վերացնել ինվենտարի և լծկանի խնայատրաստության շնորհիվ յեղած պարապուրդները: Արդյունքն այն յիղավ, վոր ամեն մի բուկկեր վարում եր 2 և կես հեկտար: Բրիգադան պլանը լիովին կատարեց:

Արդեն բրիգադան կարողացավ իրեն ամրացնել 66 ձի, 12 բուկկեր, 7 գութան և 17 տափան: Յեվ հիմա Ֆիլկովը վոշ թե անկուսակցական ե, այլ կոմերիտական, վոշ միայն իր բրիգադայում, այլ և ամբողջ կոլտնտեսության մեջ հանդիպական պլան մտցնելու առաջին կազմակերպիչն ու նախաձեռնողը:

Հանդիպական պլանը դաշտերում չտեսնված տեղաշարժեր առաջ բերեց: Նրա ոգնությամբ հարվածայիններն ուղղումներ մտքերին մշակույթի նորմաներում: Նրա ոգնու-

Թյամբ հնարավոր յեղավ առավել լրիվ չափով խոստագործել գյուղատնտեսական խոշոր արտադրության առավելությունները:

Յեթե № 5 խորհրդատեսության մեջ (Վորոնցովսկի ռայոն) մեկ տրակտորի վարելու նորման 3 և կես հեկտար էր, ապա հանդիպականն ապացուցեց, վոր տրակտորն աշխատանքի ավելի լավ կազմակերպման դեպքում, միևնույն ժամանակվա ընթացքում միանգամայն ազատ կերպով կարող է մշակել 5,5—6 հեկտար, պահպանելով աշխատանքի վորակը: Կոմյերիտականներին ֆնում է կռվել մշակույթի այնպիսի նորմա սահմանելու համար, վորը հավասար լինի հարվածայինի նորմային:

Աշխատանքի լավ նմուշներ տվեց զիտական-փորձնական-ցուցադրական հացահատիկային խորհրդատեսության կոմյերիտականը: Հանդիպական պլանի և աշխատանքի լավ դրված հաշվառքի շնորհիվ ցանքի պլանը 13 որով ավելի շուտ կատարվեց: Տրակտորիստ Սեմենկոն, վորն ստացել էր յոթ շաբաթյան ագրեգատներով 77 հեկտար, ցանելու առաջադրություն, առաջարկեց 80 հեկտարի հանդիպական նորմա, իսկ փաստորեն ցանեց 86 հեկտար:

ՍՏՈՒԳԵԼ ԳՈՐԾԸ ՏՆՏՀԱՅՎԱՐԿՈՎ

...Հաջողությունները նշանակելի չափով ապահովված են այն տեխնիկական վերափոխումների, վորը գյուղատնտեսության մեջ ձեռք է բերված սոցիալիստական արդյունաբերության ոգնությամբ:

(Դ. Սուլիմով)

Գյուղից մինչև փորձնական հողամասը յոթը կիլոմետր է: Սովորաբար տրակտորը պետք է դատարկ ընթանա մեկ ժամում: Բայց տրակտորը վարողները մոռանում են այս բանը: Նրանք փորձում են տրակտորը քշել վորպես թեթև ավտո և այդ տարածությունն անցնել կես ժամում... Հետե-

վանքը—մոտորի չափից դուրս տաքացում և, վորովհետև տրակտորը չունի ռեսուրսներ, ուստի նրա աշխատող մեխանիզմի միացուցիչ և այլ մասերը քանդվում են,—այսպես էր դրում կոմյերիտականը քշիչին ուղղված իր նամակում և խնդրում էր միջոցներ ձեռք առնել:

Տրակտորները ջարդվում են վոչ միայն արագ քշելուց, այլ և տրակտորավարների ցածր վորակից և անփութ, անշնորհ քշելուց, տրակտորի հետ վարվել չգիտենալուց: Միթե քիչ է պատահում, վոր տրակտորիստը, առանց անջատելու կոնուսը, փոխում է արագությունը, կամ ուղղակի մոռանալով, գնում է առանց մոտորի մեջ յուղ և ուղիստորի մեջ ջուր ունենալու:

Վերանորոգման մեջ թերի նայվածքը, սխալ կատարված վերանորոգումն անցյալ տարի այն հետևանքն ունեցան, վոր տրակտորները հաճախ ջարդվում էին, դուրս էին գալիս շարքերից աշխատանքի ամենայնուհեմ ժամանակը:

Վերցնենք թեկուզ Ստալինի անվան կոմունան, վորն սպասարկում է Բոգոսլավսկու մեքենա-տրակտորային կայանի կողմից (Նեվինոմիսկի ռայոն): Այստեղ աշխատանքի առաջին տասն որում վոչ մի տրակտոր չկատարեց առաջադրությունը: 10 որվա ընթացքում 4 տրակտոր վարեցին ու ցանեցին միայն 19 հեկտար: Ամեն բոլոր կանգ էին հիշում առնում և, ինչքան էլ տրակտորիստներն ու վերատեսչությունը մեջտեղ բերեցին որեկտիվ պատճառները, փաստը ֆնում է փաստ: Տրակտորները ջարդվում էին այն պատճառով, վոր վատ էին վերանորոգված, աշխատանքի ժամանակ նրանց հետ անփութ էին վարվում:

Ահա թե ինչու պարապուրդներ էին, լինում: Կանգնած է տրակտորը, կանգնած են և 8 մարդ, վորոնք սպասարկում են 12 ձի, իսկ վերջիններս շարունակ մեքենամասեր են բերում և վերադառնում: Բացի անփութությունից, էլ ինչի՞վ բացատրել այն հանգամանքը, վոր միայն մեկ տասնորյակի ընթացքում տրակտորները ջարդեցին 45 տրակտորային դուլաններ:

Դրուժյունը լավ չի յեղել նաև «Հոկտեմբերյան Հեղափոխութիւն» կոլտնտեսութեան մեջ: Այստեղ յերեք տրակտորներից յուրաքանչյուրը վարեց մեկ հեկտար:

Սա մի փաստ է, մի վատ որինակ, վորը ցույց է տալիս, թե ինչ հետևանք է ունենում քաշող ուժը ժամանակին պատրաստելը գարնանացնի համար:

Ահա մի ուրիշ փաստ, միանգամայն հակադիր մի որինակ—Միլլերովոյի կոմսերիտական մեքենա-տրակտորային կայանը: Սա ամբողջ գարնանացանի կամպանիայի ընթացքում աշխատում եր անընդհատ: 10 որվա ընթացքում 48 տրակտորներից միայն միայն մեկը շարքերից դուրս յեկավ, այն ել վերանորոգվեց մի քանի ժամվա ընթացքում: Կոմսերիտական ՄՏԿ-նը ռաշոնում առաջիններից մեկն ավարտեց հասկավոր ե շարքահերկ (պրոպաշնի) կուլտուրաների ցանքը:

Ինչ՞ով է բացատրվում Միլլերովոյի ՄՏԿ-նի հաջողութիւնը և Բոգոսլովսկու կայանի պարտուէրյունը: Յերբ համեմատում ես, տեսնում ես, վոր միլլերովցիների մոտ դեռ զարմանացանքի նախապատրաստութեան ընթացքում յուրաքանչյուր տրակտորի ամրացված եր 3 տրակտորիս, վորոնք ահեստանոցներում սցմում եյին բրգադներին, իրենց տրակտորները վերանորոգելու համար: Սա իր դրական հետեւանքն ունեցավ տրակտորների վերանորոգման վորակի նկատմամբ: Յուրաքանչյուր ամրացված տրակտորավար հետեւում եր վերանորոգման վորակին, քանի վոր նա գիտեր, քե ինքն ե աշխատելու սկսած տրակտորով յեկ պարապուրդի ամեն մի բուսեն կանդրադառնա իր աշխատանքի վրա:

Միլլերովցիների մոտ ցանքի ժամանակ վերացված եր դիմադրութիւնը տրակտորների վրա: Մտցված եր գործավարձ: Բոգոսլովցիների մոտ այդ բանը չկար: Միլլերովցիք մրցութիւնը ծավալեցին տրակտորիստների միջև: Յի տալիս տրակտորիստները ընկերական ոգնութեան կարգով բուքսիրի եյին վերցվում լավագույնների կողմից: Կազմակերպվել եր մրցանակաբաշխութիւն լավագույն տրակ-

տորավարի, լավագույն տրակտորի ու բրիգադայի համար: Մրցանակաբաշխութեան ցուցանիշները հետեւյալներն եյին—վառելանյութի ծախսման կրճատում, ցանքային պլանների գերակատարում, պարապուրդների ավելի քիչ քանակութիւն, տրակտորի խնամք, աշխատանքի լավագույն վորակ:

Բոգոսլովսկու ՄՏԿ-նի աշխատանքից հանվելիք յեղբակացութիւններն և Միլլերովսկու հանրագումարները շատ բան են սովորեցնում: Հիմնական յեղբակացութիւնն այն է, վոր կոմսերիտականը պետք է աշխատի արմատահանել դիմադրութիւնը, մտցնել գործավարձ, թե տրակտորների վերանորոգման և թե նրանց աշխատանքի ժամանակ: Սա առանձնապէս կարևոր է, վորովհետեւ մեր յերկրամասի գյուղատնտեսութեան մեջ անսահման աճել ե տրակտորի դերը: Յեթե սկզբներում տրակտորը ազիտ-պրոպագանդիստ եր խոշոր, համայնացված տնտեսութեան համար, ապա նա այժմ վճռական, կազմակերպչի դեր է խաղում կոլտնտեսութեան կազմակերպչական-տնտեսական ամրապնդման գործում:

Այս տարվա վերջում յերկրամասի ամեն մի խոշոր գյուղում կկազմակերպվի մեքենա-տրակտորային կայան: Մեքենա-տրակտորային կայանի, իբրև սոցիալիստական հողագործութեան կազմակերպչի դերը անսահման աճել ե: Կուլտիցութեան վճռական հաջողութիւններն ապահովված են շնորհիվ նրա ճիշտ գլխավոր գծի՝ յերկրի ինդուստրացման ու գյուղատնտեսութեան մեքենայացման ուղղութեամբ: Այժմ պողպատե հեծելագործի ոգնութեամբ կլուծվի բերքատվութեան բարձրացման խնդիրը կոլտնտեսութիւններում—ագրոտեխնիկան կիրառելու միջոցով: Հարկավոր է միայն տրակտորների վերանորոգումն աշխատանքի ժամանակ վերջ տրվի նրանց շարգվելուն:

Յերկրամասում ավելի քան 10 հազար տրակտորներ պահանջում են հիմնական և միջակ վերանորոգում: Առանձնապէս մեծ խնդիրներ են դրվում խորհրտնտեսութիւնների ՄՏԿ-ների, տրակտորային արհեստանոցների ու գործարան-

ների (վորոնք տրակտորային պահեստի մասեր են պատրաստում) կոմերիտականների վրա: Տրակտորների վերանորոգութունը պետք է առնել կոմերիտականների և հասարակայնության հսկողության տակ: Պետք է ոգտագործել Արմավիրի տրակտորային արհեստանոցի զրական նախաձեռնութունը: Այստեղ յերիտասարգութունը վերահսկողութուն կազմակերպեց նորոգման վրա՝ ըստ ղեկավարային տեղեկագրի, նա զլիավորապես աշխատանք է թափում մեքենայի մասերը պատրաստել սեփական միջոցներով: Կոմերիտականները, առանց այդպիսի մասեր սպասելու յերկրամասից, զորահավաքեցին իրենց գյուտարարական միտքը և նրանք պատրաստեցին իրենց արհեստանոցներում:

Այս տարի վերանորոգման ժամկետերը շատ կարճ են: Վորքան շուտ կատարվի վերանորոգումը, վորքան շուտ պատրաստ լինի պողպատե հեծելագորն, այնքան լավ: Լաբինցիների ուրինակով, — վորոնք արշավանք հայտարարեցին կանոնավոր տրակտորի համար, — կոմերիտականները վոչ միայն պիտի կարճացնեն վերանորոգման ժամկետերը, այլ և աշխատեն, վոր վերանորոգումը լինի լավ վորակով, այնպես, վոր տրակտորը հետագայում կանոնավոր աշխատի:

Ի՞նչ անել, վ որ վերանորոգման վորակը լավ լինի: Ի՞նչ է պահանջվում զրա համար: Այս հարցի պատասխանը ղեռ անցյալ տարի տվին № 2 գիտական-փորձնական խորհրտեսության կոմերիտականները, վորոնք առաջինն եյին, վոր արհեստանոցների վերանորոգող բրիգադներն անցկացրին տնտեսական հաշվարկի:

Մորհատեսության կենտրոնական արհեստանոցում մոնտաժի ցեխում կազմակերպվեց տնտեսահաշվարկային բրիգադա, իսկ միխանիկական ցեխում — յերկու նույնպիսի բրիգադա: Տնտեսահաշվարկին անցնելը մի անգամից բարձրացրեց վոչ միայն աշխատանքի վորակը, այլ և նրա արտադրողականութունը: Բրիգադիւրը, յերեկվա աշակերտ, կոմերիտական Ռյազանցև Միխայիլը և բրիգադայի անգամ Յադրեց Կելբանը, մի ծերունի, վորը հանձն էր առել

աշխատել կոմերիտական բրիգադում — սրանք յերկուսը սխտեմատիկորեն ղերակատարում են պլանը: Յեթե առաջ Կելբանը 7 պնդանից ավելի չէր շինում, ապա, տնտեսական հաշվարկին անցնելուց հետո, սկսեց շինել 10-ական պնդան:

Տնտեսական հաշվարկին անցնելիս միխանիկական ցեխն ուներ 4 խառտի դադգյան: Յեխում յերկու հերթեր աշխատում եյին բացառապես պահեստի մասեր պատրաստելու վրա, իսկ 3-րդ հերթը, բացի այդ, կատարում էր նաև ընթացիկ աշխատանքը: Ընդհանուր առաջադրութունը կազմվել էր 3 ամսվա համար, հետո բաժանվել ամիսների վրա:

Ամսական պլանի հիման վրա կարգադրեր եյին տըրվում ամեն մի հերթին, ամեն մի աշխատողի: Բանվորներն այդ պլանների հանդեպ տալիս եյին հանդիպական պլաններ, վորոնք սխտեմատիկորեն ղերակատարվում եյին: Յեթի և տնտեսահաշվարկային բրիգադների աշխատանքի հաշվառքը կատարում էր վարչութունը և տասնորյակը մի անգամ արդյունքները փակցվում եյին ցեխում:

Ինչպես ցույց է տալիս փորձը, արդյունքներն ավելի լավ են լինում, յեթե տրակտորը վերանորոգվում է վորպես տնտեսահաշվարկային տրակտոր: Տրակտորի վերատեսուչը — նրա ղեկավարը (ոուլեվոյ) պետք է հենց այժմ գիտենա իր կարգադիր — հաշիվը՝ դարնանային աշխատանքների համար, պետք է գիտենա վերանորոգման չափն ու արժեքը: Նա վոչ միայն պիտի հետևի տրակտորի վերանորոգման լավ վորակին և ժամանակին կատարվելուն, այլ և մասնակցի իր տնտեսահաշվարկային տրակտորի վերանորոգման: Ի՞նչ կստացվի զրանից: Այն, վոր նախ վերանորոգումը կեժանանա և նրա վորակը կբարձրանա, յերկրորդ, կբարձրանա տրակտորավարների արտադրական կվալիֆիկացիան, վերջիններս ստիպված կլինեն լավ ուսումնասիրել իրենց տրակտորն և գարնանը վստահ կերպով ու անընդհատ աշխատել տրակտորով:

Հողամասի, բրիգադայի ամեն մի կոմերիտականի բջիջի, ամեն մի կոմերիտականի լոգունդը պիտի լինի՝ «տրակ-

տորին—իր գիրեկտորը: Տրակտորների տնտեսահաշվարկին անցնելու փորձ մենք ունենք: Այս գործի պիտենքը դարձել են յերկու կոմյերիտականներ—Ի. Կուլիկովն ու Կասիկովը (№ 2 գիտական-փորձական հացահատիկային խորհրտնտեսութուն):

Աշնանը, չնայելով ոպորտունիստական խոսակցություններին և հավաստիացումներին, թե հարկավոր է սկզբում հողամասն անցկացնել տնտեսական հաշվարկի, հետո արդեն մտածել տրակտորների մասին, Կասիկովն ու Կուլիկովը «Կատերպիլեր» սխառմի № 49 № 46 տրակտորներին, տերերը—դեկավարները տրակտորն, իբրև հիմնական միավորովյալ հողամասում, անցկացրին տնտեսահաշվարկին:

Ինչից սկսեցին: Տնտեսահաշվարկային բրիգադայի համար հիմնականը աշխատողների մշտական կոլեկտիվն է, վորոնք աշխատանքի սկզբից մինչև վերջը ամրացված են վորոշ հողամասին, միևնույն մեքենաներին: Հողի և մեքենաների հանդեպ դիմադրկության վերացումը—սա տնտեսահաշվարկային բրիգադայի առաջին պայմանն է: Ահա թե ինչու յերբ տնտեսահաշվարկին ելին անցնում, տրակտորիստներն ամենից առաջ սկսեցին տրակտորին կից հաստիքի (շտատի) կազմելուց: Հաստիքը վորոշված է 7 հոգի, ամեն մի տրակտորի համար—3 ղեկավար, 3 գութանավար և 1 յուզող:

Պայմանագիրը կնքելիս բրիգադան կատարեց տրակտորների մանրամասն ստուգում, կազմեց տրակտորի դրության, նրա կահավորանքի, պահեստի մասերի, կցվող գործիքների տեղեկագիրը, կազմեց տրակտորի մանրամասն անցագիրը: Յեվ սրա մեջ է տնտեսահաշվարկի յերկրորդ նվաճումը և դրական մոմենտը—տրակտորն սկսեց անցագիր ունենալ:

Յերբ արդեն հաստիք ունեցան, ամրացան վորոշ տրակտորներին, վարչության հետ միասին կատարեցին աշխատանքների հաշվարկը, ամեն մեկի համար վորոշեցին ընդհանուր առաջադրություն, մինչև 0,1 հեկտարի ճշտությամբ:

Այսպիսով բրիգադան վորոշեց, վոր № 46 տրակտորը 14 որվա ընթացքում պետք է վարե 300 հեկտար (աշնանավար), վորից 180 հեկտարը—5 տոկոսով աղտեղված (մոլախոտեր ունեցող) հող, 20 հեկտար—10 տոկոսով աղտեղված, 30 հեկտար—15 տոկոսով և 70 հեկտար—30 տոկոսով:

Հաշվի առնելով տրակտորի դրեղությունը, վորոշեցին, վոր հողը 5 տոկոս աղտեղված լինելու դեպքում տրակտորը որական կվարի 24 հեկտար, 10 տոկոս աղտեղվածության դեպքում—22,8 հեկտար, 15 տոկոս—21,5 հեկտար և 20 տոկոս—20,3 հեկտար: Բայց սա վերջնական չէ: Յուրաքանչյուր տրակտորիստ, հերթափոխվելիս, յերբ լավ ծանոթանում է դրության, ներկայացնում է հերթային-հանդիպական տարի (մի հերթով) դիմաց առաջարկեց 9 հեկտարի հանդիպական պլան, սակայն փաստորեն մշակեց 9,3 հեկտար:

Ամեն մի տրակտորի աշխատանքի վորակն ստուգվում էր ուրբով: Բրիգադաները, անցնելով տնտեսահաշվարկին, կարողացան իջեցնել արտադրական պրոցեսի ինքնարժեքը: Ահա թե ինչու վարչության հետ միասին ճշտությամբ հաշվեցին, թե վորքան կարժենա մեկ հեկտարի մշակումը:

Հիմնականում հաշվի յեր առնվում հետևյալը.—վառելանյութի արժեքը. այստեղ բրիգադան սահմանել է այսպիսի նորմաներ, 1 հեկտարին 14,8 կիլոգրամ նավթ, 0,3 կիլոգրամ բենզին, 1 կիլոգրամ ավտոլ, 0,15 կիլոգրամ սոլիդոլ և 0,3 նիտրոլ. ամբողջ վառելանյութը, վորն անհրաժեշտ էր տրակտորով 300 հեկտար վարելու համար, արժեք 653 ուրբի 99 կոպեկ:

Վերանորոգման և պահեստի մասերի արժեքը վորոշված է 90 ուրբի: Ինչպես հաշվել վերանորոգման արժեքը: Այստեղ յեղակետ ելին ընդունում հետևյալ ընդհանուր թվերը.—վերանորոգման տարեկան նորման շղթայաշարժ տրակտորների համար պիտի կազմե նրանց արժեքի 8 տոկոսը, իսկ անիվավոր տրակտորների համար—10 տոկոսը: Սա այն տրակտորների համար է, վորոնք սկսել են ոգտագործվել

կազմում էր 3 ուսուցիչ 87 կուպեկ, Այսպիսով տնտեսահաշ-
վարկային ազրեգատի տրակտորիստները վոչ միայն քար-
ձրացրին իրենց աշխատավարձն, այլ և մեկ հեկտար վարել
ինքնարժեքն իլիցյրին 45 կուպեկով:

Տնտեսահաշվարկային ազրեգատի վարել վորակը որի-
նակելի յի վերահսկողութունը այս վարը համարել և
առաջին կարգի:

Այս արդյունքները ցույց են տալիս տնտեսահաշվար-
կային ազրեգատի հաղթանակները:

Հավ տրակտորի համար միվող պայքարը հաջողու-
թյուն կունենա, յեթե վերանորոգման մեջ իսպառ վերաց-
վի դիմադրկությունը, յեթե վերանորոգման բրիգադներն
անցկացվեն տնտեսահաշվարկին, յեթե անշեղորեն կիրառվի
գործավարձն և վերացվի մանր-բուրժուական հավասարա-
քը: Ընկ. Ստալինի վեց պայմանների կիրառումը կապա-
հովի տրակտորների վերանորոգման կամպանիայի հաջո-
ղությունները:

Վերանորոգման կարիք զգացող ամեն մի տրակտոր
վերցնել կոմյերիտական հետախույզների հսկողության
տակ, հաստատել կոմյերիտական միջանցիկ վերահսկողու-
թյուն, մասնակցել առողջ տրակտորի համար մասսայական
արշավանքին—անա ինչպես և զրված խնդիրը:

ԻՆՉՆ Ե ՎՆԱՍԱԿԱՐ ԶԻՈՒՆ

...«Ինչ շուտ է ձին այլևս ավելորդ համարել: Ա-
ռանց ձիու կոլտնտեսության մեջ վոչ մի կերպ չեմ
կարող տնտեսություն կառուցել»: (Յա, Յակովլև):»

«Ընկնում են ինչպես ձյան փաթիլները յերկնքից,
վայր են ընկնում, վոնց վոր մեր կոլտնտեսության հարքած
նախագահը—այսպիսի պատկերավոր արտահայտություն-
ներով զրում եր կոմյերիտականը ռայկոմին ուղղված նա-
մակում՝ կոլտնտեսության լծկան ույթի դրության մասին:

Դիմադրկության հետևանքով, լծկանն անպետք էր դարձել
աշխատելու համար: Այդ աշխատանքների յեռուն ժամանակն
եր, Պետք եր վարել, ցանել տափանել, պետք եր տեղ հա-
ցնել վառելանյութը, ջուրը՝ տրակտորների համար և սերմա-
ցուն՝ կոլտնտեսականների ջանքերով պատրաստված ուս-
տերի համար:

«Աշխատավոր հողագործ» կոլտնտեսության մեջ ձիերն
սկսեցին ընկնել, Շինչպես ձյան փաթիլները յերկնքից, վո-
րովհետև նրանց վատ էին խնամում: Այսոր մեկն է կեր ու
ջուր տալիս, վաղը մյուսը, իսկ վաղը չե մյուս, որը յերբորդը
սար, մի ամսից հետո ձիու վոսկորները միայն մնացին: Յեզ
սա հազվագյուտ յերևույթ չե այնտեղ, վորտեղ տիրում է
գիմադրկությունը ձիուն խնամելու գործում, նրանով ուշ-
խառելու դործում, վորտեղ բոլորն ել պատասխանատու յեն
ձիու համար, իսկ ըստ էյության անձնապես վոչ վոք պա-
տասխանատվություն չի կրում:

Յերկրամասի շատ կոլտնտեսություններում, բացի «Աշ-
խատավոր հողագործից», ախոռներում տիրող դիմադրկու-
թյունը շարքերից անժամանակ դուրս և հանում գիմացկուն
ու համբերատար կուրանյան ձիուն:

Անցած տարին ցույց տվեց, թե վորքան վտանգավոր
է ձիու վատ խնամքը, վորքան վտանգավոր է քարշող ույթ-
ի վատ դրությունը, վորի հետևանքը լինում է գարնանա-
ցանի պլանի վիժեցումը: Առանձին կոլտնտեսություններում
ցանքի պլանը չե կատարվել միայն այն պատճառով, վոր
իր ժամանակին չպատրաստեցին քարշող ույթը, կերը
չհասցրին և չվերանորոգեցին ձիասարքը:

Անցյալ տարվա սխալները չկրկնելու համար, պետք է
վերջ տալ ախոռներում յեղած դիմադրկության, ձիապանե-
րի վերաբերմամբ կիրառի գործավարձը, վորով խումբ ձիյե-
րի ամբացնել լավ սարքված, վերանորոգված ձիասարք, մար-
դկանց, վորոնք անձնապես պատասխանատու լինեն ձիերի
աշխատունակության համար: Այդ մարդկանց աշխատուն-

փորձը, վերոշեցին բոլոր բրիգադներում վերացնել զիմազր-
կաթյունն և սահմանեցին պրեմիաների ֆոնդ, վերից պրե-
միաներ—հավելումներ սխաի տրվեն լավագույն խնամքի
համար:

Մի շարաթ հետո բոլոր բրեգադներում, վորտեղ վոչն-
չացված էր դիմազրկվելթյունը, մշակույթը բարձրացավ 1,5
հեկտարից մինչև 2,2 հեկտար:

Քուդյոնովյան հստաֆետայի ժամանակ, վորը անց եր
կացվում կոմյերիտական Յերկրային Կոմիտեյի նախա
ձեռնութեամբ, յերկրամասում սկսվեց ումյերիտական ուրի-
նակելի ախոռների լայն գործադրութիւնը: Կոմյերիտական
ախոռը—դա վոչ միայն ախոռ ե, վորը ընկ, Ստալինի 6
պայմանների կատարման հիմունքով հաղոցեցնում ե ձիւրերի
լավ խնամքը, այլ և դա բուկսիր ե ամբողջ կոլտնտեսու-
թեան: Այդ բուկսիրն ամեն մի ձիաւանի ստիպում ե ուժե-
ղացնել իր աշխատանքը և այն հաւասարեցնել հարվածա-
յի աշխատանքին:

Վրեակի դյուղխորհրդի (Նեվիննոմիսկի ուայոն) կոմյերիտակաւանները, ժասնակցելով բուդյոնովյան եստաֆետային, վորոշեցին կոլտնտեսության խղճուկ ձին դարձնել մարտական, առողջ ձի, վորոշեցին ձիուն շրջապատել կոմյերիտական հողատարությաժը: Մի խումբ տղերքի (վորոնց բջիջը հանձնարարել եր այդ գործը) լողունգն եր՝ «կոլտնտեսական ձին—կոմյերիտական աշխատանքի ողակ»:

Սկսեցին կազմակերպել կոմյերիտական յերկու ախոռ, մեկը «Իլյիչի պատգամները» կոմունայում, մյուսը Գամեն-կայի գյուղակի «Կարմիր սահման» կոլտնտեսությունում:

Առաջին ակտում կոմյերիտական հակադուխյան տակ
առնվեց 40 ձի («Իլիչի պատգամները» կոմունա), վորոնցից
16-ը լծկան, 24-ը մատաղ: Զիյերին խնամելու համար
նշանակվել էին լավագույն կոմյերիտական հարվածային-
ներ Սլյոշա Միրոնինը, Զագուդսկի Վանյան և Զացերին
Վասյան: Նրանց հետ սիասին աշխատում էին չերկու տն-

կուսակցական հարվածայիններ—Ռուդենկո Փեդորը և Խո-
լիկով Պյոտրը:

Իր կողմից Պոտորը:
Բրիգադային բլիշը, քննելով հարցը, ծանոթանալով
ախոռոխ, ձիու գրության հետ, այս աղերքից ամեն մեկին
տվեց վորոշ բեռնավորում—խնամել 8 ձի հնրանց ձիատար-
քը կանոնավոր պահել: Ավագ ձիապան նշանակեցին Յե-
րոխին Ալեկսեյին, վորը հետևում է ձիապանների աշխ-
տանքին, ստուգում է ձիերին կեր տալը, հետևում է իր
ժամանակին ձիերը ջրելուն և ախոռը մաքրելուն:

Բացի դրանից, Ալյոշան ցուցակներում գրանցում է աշխատանքային ուրիշներ:

Կոմյերիտական ախոռում աշխատանքը ընդհատվել է 1,25 վրեժ աշապես.—8 ձի սպառարկելու համար դրվում է համար, աշխատանքային որ: Բացի դրանից, լավ խնամքի համար, ձիու և ախոռի մաքրության, ձիերի լավ «կերած-խմած» լինելու համար տարվա վերջում վաստակած աշխատանքա լինելու համար տարվա վերջում վաստակած աշխատանքա յին որերին ավելացվում է 10 տոկոս ևս, իսկ վատ խնամ- քի, կեր տալու ժամանակ անասնապահական միջնորդի կանոնները չկատարելու համար, մեղավորի աշխատանքա- յին որերից դուրս են գալիս 10 տոկոսը:

յին որերից դուրս են գալիս 10 տոկոսը:
Ամեն մի առանձին ախոռի ձիապանների միջև կըն-
քված են սոցմրցության ու հարվածայնության պայմանա-
դրեր: Պրեմիաներ տալու համար ստեղծված և համապատ-
ասխան ֆոնդ—200 ռուբլի, վորից արդեն լավ աշխատանքի
համար պրեմիա չե ստացել ձիապան Միրոնով Ալեկսեյը:
Համար անհատական հասցեալով համարադրված պերսոնալի

Ջիյերին կեր ե տրվում անասնաբուժանական պարտի-
 ժաշկած նորմաների համաձայն: Կանոնավոր խնամքի է
 կեր տալու գեպընում այդ նորմաները միանգամայն բավա-
 կան են, ուստի կոմյերիտական ախոռի ձիերը լավ են
 սնվում:

ԴՆԴՈՒՄ:
 ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ԸՆԴՁԸ անասնապահական աշխատողներին
 հետ միասին մշակեց ատոլջապահական կանոններ, վորոնք
 ժապերեց կոմյերիտական ԽՍՀՄ աշխ. Ընկնող տեղում:
 Այս կանոններով խստորեն սահմանափորված ե կեր տալու

47

ժամանակը—կոշտ, ուժեղ և հյուսթալի կեր, նշանակված է ձիյերին ջրելու ժամանակը, ինչպես և աշխատանքի ժամանակը, ցույց է տրված, թե ինչպես պիտի հետևել ձիու առողջության, նրա ախորժակին և ամենաթեթև հիվանդության լինելու դեպքում իսկույն և յեթ հայտնել անասնաբույժին:

«Իլյիչի պատգամներ»-ի և «Վարմիր սահման» կոլտնտեսության կոմյերիտական ախոռները կնքել են մրցութային պայմանագիր, վորտեղ պարզորոշ ասված է ախոռում դիմադրկությունն արմատախիլ անելու, անասնաբուժական միջինումը պահպանելու, ախոռի մաքրության և ձիուն իր ժամանակին կերակրելու, մաքրելու մասին:

Բնորոշ է, վոր պայմանագրում մտցված է հետևյալ կետը.—

Ամեն մի կոմյերիտական ձիապան պետք է ունենա ձիյերը մաքրելու համար խողանակներ և այլն պարագաներ: Ձիյերը ջրելուց առաջ մաքրել յերկու անգամ: Ձիյերը աշխատեցնելու համար տալ միայն այն կոլտնտեսականներին և կոմունարներին, ում վոր նրանք ամրացված են, իզուր չտալ վորևե մեկին:

Այստեղ կոմյերիտական ախոռը հանդես է գալիս իբրև յեռանդուն մարտիկ ընդդեմ դիմադրկության վոչ միայն իր ախոռում, այլ և ամբողջ կոլտնտեսության մեջ: Կոմյերիտական ձիապանները ձի չեն տա նրանց, ովքեր չեն ամրացված ձիյերին:

Աշխատանքի ընթացքում հաջողությանները ձեռք են բերվել միայն այն պատճառով, վոր բրիգադային ԲՆԻՇ արթուն հսկողություն ունի ախոռի վրա: ԲՆԻՇի բյուրոյում և կոմյերիտական ժողովներում ավագ ձիապանը կանոնավոր հաշվետվություն է տալիս պայմանագիրը կատարելու և ձիյերի դրության մասին: Այս կոմյերիտական ախոռներն որինակ են հանդիսանում վոչ միայն կոլտնտեսության, այլ և ամբողջ ուսյոնի համար:

Այժմ կոմյերիտական ախոռները բուկսիրի յեն վերցրել հարեան կոլտնտեսություններին: «Իլյիչի պատգամնե-

րը» կոմունայի և «Վարմիր սահման» կոլտնտեսության մեջ ձիյերի ու ձիասարքի լավ դրությունը ապահովեց աշխատանքի պլանների կատարումը:

Վրեսկի խորհրդի կոլտնտեսությունների բրիգադային ԲՆԻՇները հասկանում են, վոր կոլտնտեսական ձիու լրիվ ոգտագործումն ու լավ դրությունը, դա մի մեծ քաղաքական խնդիր է:

Վրեսկի կոմյերիտականների հաղթանակների ձևակերպմանը—գործավարձ, պլյուս հարվածայնություն և սոցմրցություն—պետք է տիրապետե ամեն մի կոմյերիտական:

Յերկրամասի առանձին կոլտնտեսություններում ձիու վատ խնամքը բացատրվում է ձիու «ձախլիկ»—ոպորտուն յիստական թերազնահատումը, յերբ կարծում են, թե քանի վոր տրակտոր կա, ձին այլևս հարկավոր չէ: Դա տխմարություն է, վնասակար տխմարություն, վորը ձեռնտու յե կուլակին:

Վարանցով-Ալեքսանդրովսկի ուսյոնի «Բաևիկ» կոլտնտեսությունը դառը փորձ ունի, թե ինչ հետևանք է ունենում ձիու թերազնահատումը և մեքենայական ու քարշող ույժն իրար հետ վատ ոգտագործելը: Ամբողջ աշխանը վարչության մարդիկ հույսերը դրել էյին ՄՏԿ տրակտորների վրա և 540 ձիյերը ցանքի ժամանակ չեյին բեռնավորված, նրանց խնամքը համարյա բացակայում էր: Հետևանքն այն յեղավ, վոր ցանքի պլանը չկատարվեց:

Տխուր արդյունք ստացվեց միայն այն պատճառով, վոր վարչության անդամները կուլակային տրամադրություն վոր ձիյերի դարձան, կարծելով, վոր իբր թե այժմ, յերբ տրակտորներ կան, պետք է ձեռք վերցնել ձիյերից: Յեվ պատահական չէ, վոր ախոռներում դրձավարձ մտցնելը, կոլտնտեսություններում դիմադրկության վերացումը հաճախ հանդիպում են կուլակային համառ դիմադրության:

Դեպի ձին միայն «ձախլիկ», ըստ եյության կուլակին ձեռնտու տրամադրությամբ պիտի բացատրել թույլ հոգա-

տարությունը կերի մասին—վոչ միայն կոլտնտեսություն-
ներում, այլ և առանձին ռալոններում, որինակ, թուրքմե-
նական ռալոնում, վորը սիլոսացման պլանը կատարեց միայն
2,4 տոկոսով: Կերը բանվում ե դաշտում, իր ժամանակին
չի տարվում այնտեղից ու հաճախ զողացվում ե:

Կերը կրելը, նրա պահպանելն ու խնայողաբար ծախսելը կոմյերիտովուժյան պայքարի մի մասն է, վոր նա մղում է պարնանացւանին լաւ պատրաստուկիւ համար:

Այնտեղ, վորտեղ սիրուներ են գցված, պետք է հսկողութիւն ունենալ նրանց լավ պահվելու վրա, չթողնել, վոր քանդվին, ճեղքվին, հետեւել, վոր փոսերի, խրամաւանների մեջ ողբ չթափանցի և սիրոսն ոգտագործելուց առաջ ծանոթանալ սիրոսով կիրակրելու յեղանակի հետ:

Ծանօթի, աշխատանքների ժամանակ ձիերի մեծ տոկոսը դաւրս ե գալիս շարքերից, շնորհիվ դիմադրկության, վատ հարմարեցված ձիասարքի։ Զիասարքը վորոշ մարդկանց ամրացնելը կազատե ձիուն թե հիվանդանալուց ե թե քերծվելուց, իսկ քերծվելու պատճառով անցյալ տարի «Լենինյան ուղի» կողմնտեսության սեջ լծկանի 25 տոկոսը հիվանդ եր ու չեր աշխատում։

Գարնանը ձին պետք է ունենա իր խոմոտը, սարքը, ամրացված ձիապանը և, վոր գլխավորն է, ամրացված կոլտնտեսականին՝ դաշտային աշխատանքների ամբողջ ժամանակ: Այդ ամրացված կոլտնտեսականը լծվառի համար պիտի պատասխանատու լինի իր աշխատանքային որերի հասույթով:

Ձիապաններին ամրացնելը գործի միայն մի կողմն է
գլխավորն այն է, վոր ձիով աշխատելու ժամանակ պետք
է ապահովել դիմադրկության կատարյալ վերացումը: Յերկ-
րային կազմակերպություններին վորոշմամբ, Յերկրկուտնու-
միության հատուկ ցուցմունքի համաձայն, վոր տրված է
ամբողջ գործարքային տարվա վերաբերմամբ, մեկ կուտնտե-
սականին ամրացվում է յերկու ձի, իսկ կուտնտեսական-
ներին մի վորոշ խմբակին, վորոնք ամրացված են ձիերին,

ամբացվում է մշտական ձիապան—կերակրող՝ Այսպիսով
կրկնակի պատասխանատվություն է սահմանվում քարշող
ուլփի դրուծյան համար։ Յեթե վրեհակու կոմբերիտական-
ների մոտ ամեն մի ձիապանին ընկնում է 8 ձի, ապա այս
ձիերին ամբացվում են 4 կոլտնոեսական, ամեն մի յերկու
ձիուն։

Ձիյերին ամրացված կոլտնտեսականների պարտականու
թյունն է՝ խնամել ձիյերին, կեր տալ, մաքրել, նորոգե-
ծիասարքն և կատարել ինվենտարի մանր վերանորոգում:
Ձիուն սպասարկելու լավագույն պայմաններ ստեղծելու
համար, կոմբերիտական ախոռները ամեն մի զույգ ձիուն
տալիս են մշտական տեղ: Նրանք մշտական տեղ են տալիս
նաև ձիասարքին և այդ ձիյերին ամրացված ինվենտարին,
նաև ձիանորոգ աշխատող կոլտնտե-

Զիյերին ամրացված է նրանցով աշխատող կոլտնտեսականների աշխատանքային որերը հաշվվում են այն նորասկզբների աշխատանքային համապատասխանեն աշխատանքի մասներով, վորոնք պիտի համապատասխանեն աշխատանքի քանակին ու վորակին։ Վորպես կոմպենսացիա ամբողջ տարանակին ու վորակին։ Համար (թե աշխատանքի և թե բիւն ձիւերին խնամելու համար (թե աշխատանքի և թե աշխատանքի), կոլտնտեսականին լրացուցիչ կերպով տրուելու է 25 տոկոս, նրա վաստակած աշխորերի ամբողջ քանակի դիմաց։

հակի դիմաց,
Ձիապաններին հաշվում են մի բանվորական որվա
համար 1,25 աշխատանքային ուրի մեկ յեթե ձին լավ է
պահված և նրանով նորմաները գերադասարված են, ապա
ձիապանին նույնպես հաշվում են լրացուցիչ աշխուրեր: Իսկ
յեթե ձին վատ դրուժյան մեջ է գտնվում, ձիապանի աշ-
խուրերը կրճատվում են:

խորեբը կրճատվում են:
կոտնտեսական ձիու հիմնական ցեղը—դիմազրկու-
թյունը պետք է անհապաղ և ամբողջովին վոչնչացվի և
կոմյերիտմիության յուրաքանչյուր բրիգադային բջիջ պար-
տավոր և բոլոր ձիերին իսկույն և յեթ ամբացնել տալ
վորոշ կոտնտեսականներին, վորոնք անձնապես պատասխա-
նատու լինեն իրենց հանձնված լծկան ույժի դրության
համար:

Ձին վախենում ե վոչ թե աշխատանքից, այլ դիմազրկութունից: Կոմյերիտմիութիւնը, արմատախիւ անելով դիմազրկությունը ձիւերի խնամքից և աշխատանքից, կիրառելով գործավարձը, բոլշևիկյան յերորդ դարնանը կտա ուժեղ և առողջ ձիւեր:

Դրա հետ միաժամանակ վոչ մի դեպքում չի կարելի թուլացնել ուշադրութիւնը դեպի վերանորոգման կամպայնիան և անհրաժեշտ ինվենտարի պատրաստութիւնը ցանքին:

ՍՏՈՒԳԵԼ, ՊԱՏՐԱՍԵԼ

Վերանորոգման կամպանիայի հենց սկզբում պետք է վճռականապէս հարվածել ձիաքարշ և մանր գյուղատնտեսական ինվենտարի վերանորոգման ուղորտունիստական թերադնահատության: Նադեժնայա գյուղի ԸՎԻՋներից մեկում, յերբ ռայկոմի ներկայացուցիչը հետաքրքրվեց վերանորոգման ընթացքով, նրան հետևյալ պատասխանը տվին.—

— Տրակտորների վերանորոգումը կատարում ենք, իսկ մանր գործիքներինը—գութան, տափան—միշտ ժամանակ կուեննանք կատարելու:

Այդպիսի վերաբերմունքի հետևանքով կարող են կըրկնվել անցյալ տարվա փաստերը, յիբր Սպակոյնայա գյուղի կոմյերիտականները, ձեռքից բաց թողնելով վերանորոգման կամպանիայի ժամանակը, դառն փորձից համոզվեցին, թե ինչպէս մանր ինվենտարի անպատրաստութիւնը սպառնալիքի տակ դրեց ցանքի պլանների կատարումը:

Կոմյերիտմիության բրիգադային ԸՎԻՋը պետք է մերկացնէ կուլակության մանկը, վորն այժմ քարոզում ե, թե իբր այս խնդիրը յերկրորդական ե: Լծկան ձիւերը, հետեապես նաեւ գյուղատնտեսական մանր ինվենտարը, նուշինիսկ մեծենա-տրակտորային կայանների ռայոններում այս գարնանացանի կամպանիայի ժամանակ ղգալի դեր պիտի խաղան:

Ծավալելով գյուղատնտեսական ինվենտարի և մեքենաների վերանորոգութիւնը, կոմյերիտմիութիւնը չի կտրող անուշադիր թողնել ձիաքարշ և մանր գյուղատնտեսական ինվենտարի պատրաստութիւնը գարնանացանի համար:

Պետք ե ոգտագործել Տուլսկայա գյուղի կոմյերիտականների փորձը, վորոնք կազմակերպեցին հատուկ բրիգադներ և զբաղվեցին ինվենտարի պետքականության հաշվառով, և զբաղվեցին ինվենտարի վարչության հաշվի առնելու ոգնեցին կոլտնտեսության վարչության հաշվի առնելու անհրաժեշտ վերանորոգութիւնը, կազմակերպեցին ու վերսկսեցին կարի արհեստանոցների և դարբնոցների աշխատանքը, վարչության առաջ կտրուկ կերպով հարց դրին՝ կարող և դարբին կոլտնտեսականներին գործավարձի անցկացնելու մասին:

Անցյալ տարի Նիկոլաեսկայա գյուղում կոմյերիտմիութիւնը կազմակերպեց մի քանի կոմյերիտական դարբնոցներ, վորոնք որինակելի կերպով դրին ինվենտարի վերանորոգման աշխատանքն և վորպես բուքսիր ծառայեցին անցած դարբնոցների համար: Այժմ պետք ե ոգտագործէ անցյալ տարվա փորձը:

Ուրեմն գործնականորեն մանր, ձիաքարշ գյուղատնտեսական ինվենտարի վերաբերմամբ առաջին հերթին պետք ե պարզել վերանորոգման քանակը, ոգնել վարչությանը կատարելու հաշվառքը, դարբնոցները պատրաստելու վերանորոգման կամպանիայի համար և կազմակերպելու վերանորոգման հարվածային բրիգադներ: Դարբնոցները պատրաստել վերանորոգման կամպանիայի համար, նշանակում ե մարդիկ ընտրել, ծանոթացնել նրանց դարբնոցներն ապաների հետ, անցկացնել գործավարձի, դարբնոցներն ապահովել աճուխով, վորն անցյալ տարի չբավականացավ վոչ թե նրա համար, վոր չկար, այլ վորովհետեւ ժամանակին չմտածեցին այդ մասին և չլրեցին աճուխ:

Վերանորոգման կամպանիան պետք ե անցկացնել ամենակարճ ժամկետում, աշխատելով, վոր վերանորոգումն

ամենաարագ թափով ավարտվի, վորից հետո, անցյալ տո-
րիները որինակով կատարել ինվենտարի պատրաստության
ստուգատեւ: Ստուգումը պետք է պարզե, թե վորքան ին-
վենտարը պետքական եաշխատանքի համար, պետք է պարզե
առանձին թերակատարումները վերանորոգման մեջ և ամե-
նամոա հնգորյակի ընթացքում վերացնե հայտնաբերված
թերակատարումները:

Գարնանացանի նախապատրաստության գործում սեր-
ւացունների հավաքումն ու ստուգումը դիւսավոր տեղերից
մեկն է բռնում: Անցյալ կամպանիաների փորձը ցույց է
տալիս, վոր դեպի սերմացունների հավաքումը յեղած անբա-
վարար ուշադրությունն այն հետեանքն եր ունենում, վոր
ցանքի վորակն իջնում եր, չեյին կերաւովում ագրոտիս-
նիկական միջոցառումները, դաշտերն աղտեղվում էյին մո-
լախոտների սերմերով և վատ ծիլ էյին տալիս:

Սերմացունների հավաքումը և նրա պատրաստությունը
թերագնահատելու հետեանքով, Սերդիկակի գյուղում (Ալեք-
սանդրովսկի ռայոն) Ռիլսկու անվան կոլտնտեսությունը
գարնանացանին դիմավորեց առանց սերմացունների, իսկ
յերբ մեծ դժվարությամբ սերմացու գտան և ուղեցին ախ-
տահանել, այն ժամանակ պարզեցին, վոր ախտահանման
նյութերը դեռ չեն ստացված:

Վերպետել չէրկնվեն նման փաստերը, կոմյերիտական-
ները պետք է հսկողության տակ առնեն սերմացունների
պատրաստումը ցանքի համար: Հենց այժմ, ոգտագործելով
Նով-բեկեյսկի գյուղի կոմյերիտականների փորձը, պետք
է հոգ տանել և ստեղծել սերմացունների գտման բրիգադներ,
վորոնք կարողանան ամբողջ սերմացույի նյութերը անց-
կացնել տրեյներով, կազմակերպել սերմացունների պահպան-
ման գործը, ստուգել ախտահանիչ միջոցների գոյությունը
և սերմացունների ծիլում ընդունակությունը:

Նովորիկովսկի գ. կոմյերիտականները սերմացունների
ծրունակության ստուգումը անցկացրին այսպես. ցանքը
սկսելուց յերկու ամիս առաջ կատարվեց փորձնական ցանքսը

արկղների մեջ: Պարզվեց, վոր յերկու շտեմարաններում
յեղած հացահատիկը պետքական է ցանքի համար, իսկ յեր-
բորդ շտեմարանի սերմացուն փոխվեց՝ վատ ծրունակության
պատճառով:

Վերանորոգման կամպանիան, սերմացույի պատրաստ-
ման, պահպանության և ստուգման կամպանիան—կարեու-
րագույն ողակն է բոլշևիկյան յերկրորդ գարնան պատրաս-
տության: Այս կամպանիաներն անցկացնելու վորակից պի-
տի կախված լինեն գարնանացանի հաջողությունները, կու-
տնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամ-
բարանման հաջողությունները: Կոմյերիտական կազմակեր-
պություններից պահանջվում է, վոր նրանք ճշգրիտ, ոպե-
րաւով կերպով և կոնկրետորեն ղեկավարեն այն կոմյերի-
տականներին, վորոնք կապված են վերանորոգման, սերմա-
ցունների պատրաստման և ագրո-տեխնիկայի պայմանների
կատարումն ապահովելու հետ:

Թեթև հեծելազորի խմբակներով, պատանի թղթակից-
ների և ԲԳՏ սեկցիաների անդամների մասսայական շրջա-
գայություններով պետք է ստուգել կերի ֆոնդերի պատ-
րաստությունը և լծասարքի դրությունը: Նրանք պետք է
աշխատեն, վոր իրոք կատարվեն յերկրային կազմակերպու-
թյունների ցուցմունքները: Պետք է ոգնեն կուսակցական
բշիջներին՝ գորահավաքելու կոլտնտեսական մասսաներին՝
կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամ-
բարանման վերաբերյալ կուսակցության վորոշումներն իրա-
գործելու համար:

Կոմյերիտականը վոչ միայն լավ, որինակելի արտա-
դրական աշխատող է, վոչ միայն բոլորից շատ և լավ է աշ-
խատում, այլև նա նույնպես պարտավոր է լինել յերիտա-
սարդության կազմակերպիչ, կատարելու համար գարնանա-
ցանի պլանները և այն խնդիրները, վորոնք առաջադրել է
կուսակցությունը՝ կոլտնտեսությունների կազմակերպչա-
կան-տնտեսական ամբարանման համար:

Քիչ է յերիտասարդության հարվածային բրիգադա

ստեղծելը. բիշ և նաև, յեթե այդ հարվածային բրիգադան
կաշխատի մյուս կողմնտեսական բրիգադաներից ավելի լավ:
Հարկավոր է, վորպեսզի յերիտասարդական բրիգադայի
փորձը հանձնվի ուրիշ բրիգադաների, վորպեսզի ամբողջ կոլ-
տնտեսությունը հավասարվի կոմյերիտական բՆիշի ստեղ-
ծած բրիգադայի աշխատանքին:

Անցյալ տարի Սլավյանսկայա դյուղի կոմյերիտական-
ները միադամայն ճիշտ վարվեցին, յերբ, բացի նրանից, վոր
աշխատում էին հարվածային բրիգադայում և այդ բրիգա-
դան սուսլինն էր մյուսների մեջ, մասսայական մեծ աշ-
խատանք կատարեցին նաև մյուս բրիգադաներում, հանձ-
նելով իրենց աշխատանքի փորձը: Վերջինս հանձնելու ձևն
էին՝ զրույցները՝ խորհրդակցությունները, պատի և լու-
սավոր լրագրները: Բացի այս ձևերից, Վոդնեսենսկայա
գյուղի կոմյերիտականները կազմակերպեցին կուլտ-կոմ-
բայն, վորը շրջելով տափաստաններում, կուլտ-լուսավորա-
կան աշխատանք էր կատարում, մասսայական աշխատանքի
բոլոր ձևերի միջոցով կոլտնտեսական մասսաներին զորա-
հավաքում էր դարնանացանի պլանները կատարելու համար:

Կուլտ-կոմբայնը սպասարկում էր վեց կոլտնտեսու-
թյան (աշխատում էր բրիգադաներում): Կուլտ-կոմբայնի ար-
դյունքները հետևյալներն էին. — «Մեծ Հոկտեմբեր» կոլ-
տնտեսության մեջ մինչև կոմբայնի գալն աշխատանքի յեր-
դուրս գալիս կոլտնտեսականների 60 տոկոսը, իսկ զալուց
հետո հաճախումը բարձրացավ մինչև 94 տոկոս: Յեթե տառջ
չէր ոգտագործվում քարշող ուշօր, ապա նրա պարապուրդ-
ներն ամբողջովին վերացվեցին: Մերկացնելով ոպորտու-
նիստներին, կորզիչներին, թափթփվածներին, ծուլներին,
կուլտ-կոմբայնն ուժեղ պայքարում էր կուլակային տրամա-
դրությունների դեմ, զորահավաքելով վոչ միայն յերիտա-
սարդական, այլև կոլտնտեսական մասսաներին, ցանքի պը-
լանների իրագործման համար: Կուլտ-կոմբայնն ուներ լու-
սավոր և պատի լրագրեր, կինո-նկար և արտասանող-յեր-
գիչների խմբակ:

Մասսայական — բացատրական աշխատանքի ճիշտ ծա-
վալումը, այդ աշխատանքի բոլոր ձևերի ոգտագործումը
վճռական դեր են խաղում գարնանացանի հաջողության
համար: Կոմյերիտական բՆիշը վոչ մի դեպքում չպիտի մո-
ռանա այս բանը: Պետք է աշխատել, վոր յուրաքանչյուր
բրիգադայում կոմյերիտական աշխատի վոչ միայն հար-
վածայնորեն, այլև լինի հարվածային՝ կուսակցության ու
կառավարության վորոշումները մինչև կոլտնտեսականի գի-
տակցությունը հասցնելու գործում:

Յուրաքանչյուր կոմյերիտական պարտավոր է լինել
վոչ միայն արտադրական լավ աշխատող, այլև ագիտատոր
և կոլտնտեսականների մոտիկ ոգնական՝ կուսակցության
վորոշումները յուրացնելու և ճիշտ հասկանալու:

ԲՆիշի ձևքում բրիգադային պատի լրագիրը մի ուժեղ
գեներ է, լինելով մասսայական աշխատանքի ձևերից մեկը:
Նրա դերն անսահման չափով աճում է: Բրիգադային պատի
լրագիրը վոչ միայն կազմակերպում և հանձնում է փորձը,
այլ և հանդիսանում է նախաձեռնող և կոմյերիտական բՆի-
շի ոգնական, այս կամ այն միջոցառումը կիրառելիս:

Նովո-Սբեդնի գյուղի կոլտնտեսության որինակը շատ
լավ ցույց է տալիս, թե ինչպիսի դեր կարող է խաղալ
պատի լրագիրը ցանքի պլանների համար մղվող պայ-
քարում: Աշնանը պատի լրագիրը բրիգադաներում
հայտարարեց արտադրական խորհրդակցությունների
ստուգատես և ոացիոնալիդատորական առաջարկների հա-
վաք: Լրագրի առաջարկությամբ՝ կիրառեցին բը-
րիգադի Յեգինի մի ոացիոնալիդատորական միջոցառումը:
Նրա առաջարկը կայանում էր նրանում, վոր ամեն մի ցա-
նիչի վրա շինվում էր նստելատեղ, նստելատեղը շինվում էր
ցանիչի յետևից, այնքան տարածությամբ, վոր ցանոցն ա-
ռանց իջնցնելու կարողանա բացել սերմի արկղը և հատուկ
մաքրիչով մաքրի սկավառակը (դիսկը), յեթե սա կեղտոտ-
ված է: Այս միջոցառման շնորհիվ հնարավոր յեղավ մեկ
աշխատողի կրճատել:

Յերկրորդ առաջարկութիւնը, վոր անցկացրեց պատի
լրագիրը, դա յերեք մեկ ողականի տափանների կցումն էր:
Յերեք տափանը քաշում են յերկու ձի, վորոնց քշում է մի-
կոլտնտեսական: Մինչ այդ տափանը քաշում էյին 3 ձի և
աշխատում էյին 6 կոլտնտեսական:

Յերրորդ միջոցառումը յերկու սկավառականի ցա-
նիչներէ միացումն էր: Յանիչները գրվում են իրար կողքի,
հարեան անիվները հանվում են, առանցքներն իրար ամրաց-
վում են պինդ ձողերով և ստացվում է մի ցանիչ: Մա տա-
լիս է յերկու ձիու և մեկ բանվորի խնայողութիւն:

Պատի լրագիրը մեծ պայքար մղեց դործավարձ մտքը-
նելիս: Ծուլիւրն ու սիմուլյանտներն ատամ էյին կրճատ-
ցնում լրագրի դեմ, վորը դործավարձի մասին էր գրում: Սի-
մուլյանտները գոռում էյին՝ «Մեզ այդ լրագիրը հարկավոր
չէ: Ի՞նչու է նա գրում: Ավելի լավ է աշխատել կոլտնտե-
սութիւն համար, ով ինչքան կարող է»:

Կոմյերիտական պատի լրագրի առաջարկները պաշտ-
պանում էյին լավագույն հարվածայինները: Գործավարձով
աշխատելու հենց առաջին տասնորյակում խիստ բարձրա-
ցավ աշխատանքի արտադրողականութիւնը:

Բրիգադայում մեկ բուկիւրի նորման սահմանվեց 3
հեկտար (հաստառովեց արտադրական խորհրդակցութեան կող-
մից) և այդ աշխատանքը գնահատվեց 1,25 աշխատանքա-
յին որ: Իսկ յեթե վարվի 2,1 հեկտար, ապա դուրսնավո-
րը կստանա 1,70 աշխուր, իսկ 2,2 հեկտար վարելու դեպ-
քում՝ 2,2 աշխուր:

Բրիգադիւրը և բրիգադիւրի ոգնականն իրավունք ու-
նեն իրենց աշխատանքային որերը հաշվել միայն ամբողջ
բրիգադայի մշակույթի կապակցութեամբ, այսինքն՝ յեթե
բրիգադան գերակատարի պլանը, բրիգադիրն էլ շատ կըս-
տանա: Որինակ, ամբողջ բրիգադայի նորման գերակատար-
ված է 5 տոկոսով, աշխատանքային որերը բրիգադիրին
գրվում են 10 տոկոսով ավելի: Եթե բրիգադային առաջա-
դրութիւնը գերակատարվում է 10 տոկոսով, բրիգադիրին

գրվում է 20 տոկոսով աշխատանքային որ: Նախատեսված
էն նաև վորակի հարցերը: Աշխատանքի վատ վորակի հա-
մար գնահատութիւնն իջեցվում է 25 տոկոսով:

Սիմուլյանտների դեմ մղվող պայքարում կոմյերիտա-
կան բջիջի ձեռքում մի սուր զենք էր պատի լրագիրը: Ո-
րինակ, լրագրի առաջարկութեամբ, Պ. Ստերնը սիմուլիտ-
րինակ, լրագրի առաջարկութեամբ, կերպով փչացնելու հա-
ցիայի, ինվենտարը դիտավորյալ կերպով փչացնելու հա-
մար, ընկերական դատարանի կողմից դատապարտվեց պատ-
մար, ընկերական դատարանի կողմից կոլտնտեսութիւնից՝
ժի ամենաբարձր չափին—հեռացվեց կոլտնտեսութիւնից:

Պետք է ուղղակի առել, վոր ցանքի պլանների ժամա-
նակին կատարմանը նպաստեց կուլտուր-մասսայական մեծ
աշխատանքը, վորը կոմյերիտական բջիջը ծավալել էր կու-
տնտեսական բրիգադներում: Կոմյերիտականներն ոգնեցին
կուսակցական բջիջին՝ ճաշի ընդմիջումների ժամանակ բրի-
գադներում կազմակերպել զրույցներ, լրագրերի ընթեր-
ցումներ: Կոմյերիտականներն ուսումնասիրում էյին կուլտը-
տեսական շինարարութեանը վերաբերող վորոշումները:

Մասսայական աշխատանքի հարցերը, նրա բոլոր ձե-
վերի գործադրութիւնը կոլտնտեսութիւնների կազմակերպ-
չական-տնտեսական ամրացման համար—պետք է պատվա-
վոր տեղ բռնեն կոմյերիտիութեան բջիջի աշխատանքների
պլանում, զարնանացանի նախապատրաստութեան առաջադե-
րում:

ՏԵՄՊԵՐ ՅԵՎ ՎՈՐԱԿ

«Մեր ծրագրի ոեակ լինելը, դա կենդանի մարդիկ
են, այդ մենք ենք ձեզ հետ, դեպի աշխատանքն յե-
ղած մեր կամքը... պլանը կատարելու մեր վճառա-
(Ստալին)

Կոմյերիտիութեան դեկտեմբերյան պլանումում ընկ-
րիվիշեք, շեշտելով յերիտասարդութեան աճող դերն արտա-
դրութեան մեջ, արտադրական հարցերի լուծման մեջ կոմ-

յերթումիության մասնակցությունն ու նրա դերի բարձրացումը, մատնանշում եր, վոր «տնտեսության հարցերը դարձել են աշխատանքի սիստեմ: Մենք գործնակում սկսեցինք տիրապետել տեխնիկային և հենց այս պատճառով մենք առաջ ենք շարժվում, յետ չենք մնում, միևնույն տեղում չենք մնում»:

Գյուղատնտեսության մեջ հիմնականը, վորի վրա այժմ պիտի կենտրոնացնել ուշադրությունը, դա կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդումն է, վորի հիմնական ողակը հանդիսանում և՛ կոլտնտեսային արտադրության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու հարցը:

Ինչ է նշանակում պայքարել կոլտնտեսական աշխատանքի բարձր արտադրողականության համար: Այդ նշանակում է առաջին հերթին վճռականապես իրադրոծել Ստալինյան վեց պայմանները, հաշվի առնելով կոլտնտեսական արտադրության առանձնահատկությունները: Ինչպես ցույց տվեց գործավարձ մտցնելու փորձը, դիմադրկության և հաճախարանքի վերացումը ամենաբարձր աստիճանի յի հասցնում հարվածայնությունն ու սոցմրցումը, զգալի չափով բարձրացնում է կոլտնտեսական աշխատանքի արտադրողականությունը:

Կուսակցության Յերկրկոմի, Յերկրգործկոմի և Յերկրկոլտտմիության վորոշումների (կոլխոզների մանրացման, կոլտնտեսականների միջև յեկամուտները բաշխելու մասին) կատարումը, պայքարը՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, վորպես՝ կազմակերպչական-տնտեսական ամրապնդման գլխավոր ողակի, ագրոտեխնիկային տիրապետելն և բերքատվության բարձրացումը, պայքարը՝ ՄՏԿ-ների և կոլտնտեսությունների աշխատանքի բարձր վորակի համար, ապրանքայնության բարձրացման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար—այս բոլորը կապահովի կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման հետագա հաջողությունները:

Այս խնդիրներին պիտի յենթարկվեն դարնանացանի նախապատրաստության բոլոր աշխատանքները:

Հնգամյակի չորրորդ, ավարտական տարվա,—տեմպերի և վորակի տարվա՝ դարունը հանդիսանում է բոլշևիկյան յերրորդ դարուն, մի դարուն, յիբ հիմնականում պետք է լուծվեն կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման հարցերն և պետք է ապահովվի հրեշտակյա պլանի ավարտման հաջողությունը:

Յուրաքանչյուր կոմյերիտականի, յուրաքանչյուր բջիջի առաջ այսոր դրված են նաև տեղական կազմակերպություններին ոգնելու հարցերը, դրված են արտադրական կոնկրետ խնդիրներ, այն է—

—Գարնանացանի ժամանակ ձիշտ կազմակերպել կոլտնտեսական աշխատանքը:

—Ապահովել ինվենտարի և սերմացույի պատրաստությունը:

—Պատրաստել կենդանի ու անկենդան քաշող ուլթը:

—Տիրապետել ագրոտեխնիկական գիտելիքներին:

Ագրոտեխնիկական միջոցառումների համար մղվող պայքարը յուրաքանչյուր բրիգադային բջիջի կարևորագույն խնդիրն է: Ագրոմիխմուլը (ցանքավորություն, մաքուր տեսակի սերմացու, վարի ու ցանքի ժամկետների պահպանում և այլն) կիրառելու գործում բջիջները պարտավոր են վերահսկողություն կազմակերպել և գործոն ոգնություն ցույց տալ գյուղատնտեսական տեսչության և կոլտնտեսությունների վարչություններին:

Միլիոնավորի կոմյերիտականների ոլինակով, յուրաքանչյուր կոմյերիտական պետք է իր վրա կոնկրետ պարտավորություններ վերցնի յերաշտի դեմ պայքարելու, բարձր բերքի համար պայքարելու: Նա պետք է իսկույն և բարձր կիրառե, ձյունը հարթելու, վարելու, ձյունը պայթի կիրառե, ձյունը հարթելու, անտառատնկման տարածությունների պատրաստման, լճակներ սարքելու իրերի հավաքման և այլ միջոցառումները:

Այս բոլորը չի կարելի հաջողութեամբ կատարել, յեթե իրեւոյն և յեթ, կոմյերիտմիութեան ղեկտեմբերյան պլեն-նումի վորոշումների հիմունքով չդասավորվեն կոմյերիտա-կան ուժերը: Այդ ուժերը պիտի դասավորվեն այնպես, վորպեսզի յուրաքանչյուր վճռական ճակատամասում լինի կոմյերիտական ողակ, վորը ցույց տա բոլշևիկյան որինակի նմուշներ և այդ հիմունքով զորահավաքե յերիտասարդու-թեանն ու հասակավոր կոլտնտեսականներին, կուսակցու-թեան վորոշումների կատարման համար:

Փարնանացանի պլանի, կոլտնտեսութեաններէ կազ-մակերպչական-տնտեսական ամրապնդման համար մղվող պայքարը ղեկար է պատկանեցնել առանց կոմյերիտմիու-թեան Կենտկոմի ղեկտեմբերյան պլենումի կարեւորագույն վորոշումները կատարելու: Կոմյերիտականների գործոն մասնակցութեանը կապահովի հմտորեն և կոնկրետ ղեկա-վելու, ուժերը կազմակերպելու և ճիշտ դասավորելու (բնորոշելով աշխատանքի վճռական ճակատամասերը) և կա-տարումն ստուգելու, հսկելու ղեկը: Միայն Կենտկոմի պլենումի վորոշումները (կոնկրետ ղեկավարութեան, կոմյե-րիտմիութեան մարքսիստական-լենինյան դաստիարակու-թեան մասին) կատարելու թերութեան և պրակտիկան հմուտ կերպով ներդաշնակելու միջոցով կապահովի կոմյերիտ-միութեան հաջող աշխատանքն և իրական մասնակցութեանը զարնանացանի նախապատրաստութեան աշխատանքին:

Պլենումի վորոշումներէ մասնակի իրադրման առա-ջին որինակներն ոգնեցին Միլլերովոյի ռայոնի «Կոլտնտե-սականի գրողակ» կոչված կոլեկտիվ տնտեսութեան կոմյե-րիտական բրիգադային՝ հենց այժմվոտքի հանելու ամբողջ կոլտնտեսութեանը, զարնանացանը մարտականորեն անց-կացնելու, կազմակերպչական-տնտեսական ամրապնդման համար:

Կոմյերիտական բրիգադային բջիջը, քննելով Կենտ-կոմի պլենումի վորոշումները, յերիտասարդական բրիգա-դային տվեց հետեյալ կոնկրետ առաջադրութեանները,—

քնտրել կոլտնտեսութեան մի վորոշ մասն և ընկ. Ստալինի վեց պայմանների հիմունքով ցույց տալ, թե ինչպես պիտի կազմակերպել զարնանացանի պատրաստութեանը, աշխա-տելով սեփական փորձը հանձնել կոլտնտեսութեան բոլոր բրիգադներին:

Կոմյերիտական բրիգադան հենց սկզբից կարողացավ վարչութեան միջոցով ստանալ 39 ձի, ցանքի կամպանիայի համար ինվինտար: Բրիգադան բաժանվեց մասը խմբակնե-րի և իր վրա առավ զարնանացանի պատրաստութեան վո-րոշ աշխատանքներ:

Որինակ, կազմակերպեց կոմյերիտականների մի խմ-բակ, ձիերի համար կեր տանելու: Խմբակի մեջ մտան լա-վազույն հարվածայինները—Վասիլչենկո Տ., Չուբով Վ., Տերեշչենկո Յե.: Այս խմբակը ձիերին պետք է կերով ա-պահովի դաշտային աշխատանքների ամբողջ սեզոնում: Յերկրորդ,—ինվինտարի վերանորոգման խմբակի վրա պարտականութեան է դրված՝ հայտնաբերել վերանորոգ-ման կարիք զգացող ամբողջ ինվինտարն և սկսել վերանո-րոգումը: Յերրորդ խմբակը պիտի զբաղվի սերմացուների չոր և խտտահանման և գտման, սերմերի փորձնական աճեց-ման և ստուգման գործով: Չորրորդ խմբակը կազմակերպվել է հատկապես ախոռները, սայլերն ու կառքերը վերանորո-գելու և սարքելու համար:

Բրիգադայում ամեն մի ձիապան ամբացված է վորոշ քանակութեամբ ձիերի և ամբողջապես պատասխանատու յի իրեն հանձնված ձիերի համար: Խնամում է 12 ձի:

Տասն ուրը մի անգամ բրիգադային բջիջի բյուրոն և քարտուղարը ստուգում են խմբակների աշխատանքները: Քարտուղարը հետևում է վորոշումների կատարմանը: Յու-րաքանչյուր կոմյերիտական, վորն աշխատում է խմբակում, պարտավոր է գիտենալ վոչ միայն այն, թե ինչպես պիտի կատարի իր աշխատանքը, այլ և գիտենալ կուսակազմակեր-պութեան ու կառավարութեան վերջին վորոշումները այն աշխատանքային մասնաճյուղի վերաբերյալ, վորտեղ նա

ղբադված եւ Բջիջն և բյուրոյի անդամները մեծ ուշադրութեամբ են հետևում այս բանին, աշխատելով, վոր ամեն մի կոմյերիտական իր աշխատանքի ընթացքում ոգտադործել լրագիրն և կուսակցական վորոշումներէ նյութերը:

Յմբակներում լայն չափով կիրառվում ե գործավարձը: Ձիապանները բոլորն աշխատում են գործավարձով: Կոմյերիտական բրիգադան, պատրաստվելով գարնանացանին, շատ խիստ ու խնամքով ե ծախսում կերը: Կոմյերիտական բրիգադան իր որինակով ամբողջ կոտնտեսությունը վոտքի հանեց գարնանացանի պատրաստութեան համար: Անկուսակցական լավագույն յերիտասարդ ընկերներ, ինչպես, օրինակ, Լոկտեվը, Ռաննիկովը, դիմում են տվել կոմյերիտմիութեան մեջ մտնելու համար:

Կոմյերիտական բրիգադայում լայնորեն ծավալված ե սոցիալիստական մրցությունը: Բրիգադան որինակ ե ծառայում կուլտուր-մասսայական ու բացատրական աշխատանքները ծավալելու տեսակետից: Բրիգադայում կա եստաֆետայի տախտակ, վորտեղ փակցվում են յուրաքանչյուր կոմյերիտականի աշխատանքի ցուցանիշները: Պատի լրագիրն առաջինն եր, վոր սկսեց պայքարը գարնանացանի նախապատրաստութեան, ձյունապահի և բերքի համար: Բրիգադայում աշխատող յուրաքանչյուր կոմյերիտական պարտավորվել ե գարնանը 20 ծառ տնկել:

Բրիգադայի հաջողությունը կայանում ե նրանում, վոր բրիգադային բջիջն սկսեց կատարել պլենումի (կոմյերիտմիութ. Կենտկոմի) վորոշումները կոնկրետ ղեկավարութեան, յուրաքանչյուր կոմյերիտականի թեորետիկական մակարդակի բարձրացման մասին: Բջիջն աշխատում ե, վոր աշխատանքի ընթացքում ամեն մի կոմյերիտական ոգտագործել մամուլը և կուսակցական վերջին վորոշումները:

Ինչից պիտի սկսել, վորպեսզի ապահովվի այն խընդիրների իրագործումը, վոր կուսակցութեանը դրել ե կոմյերիտմիութեան առաջ, գարնանացանի առթիվ:

Արտադրութեան վճռական ճակատամասերում հարկավոր ե ճշտութեամբ դասավորել ուժերը: Միլլերովոյի կոմյերիտականների համար աշխատանքի այդպիսի վճռական ճակատամասերից մեկը, դա յերիտասարդական բրիգադայում ցանքի նախապատրաստութեան կազմակերպումն եր:

Կոմյերիտմիութեան ուժերի ճիշտ դասավորումը կապահովվի կոնկրետ ղեկավարութեամբ: Իսկ ինչ ե նշանանում կոնկրետ ղեկավարել: Այդ նշանակում ե նախ, տիրապետել մարքսիստական-լենինյան թեորիային, ծավալել թեորետիկ ուսուցումը, վորն իրև ոժանդակություն պիտի լինի գործնական աշխատանքում: Պետք ե հասկանալ, վոր առանց մարքսիստական-լենինյան թեորիային լավ տիրապետելու, չի կարելի հաջողութեամբ առաջ մղել ամենորայ պրակտիկան:

«Պրոլետարական Հեղափոխություն» հանդիսում տըպված՝ ընկեր Ստալինի նամակը հարց ե դնում մարքսիստական-լենինյան թեորիայի հասակութեան պայքարի պայմանների մասին: Այս նամակը մերկացնում ե բուրժուադիայի առաջավոր ջոկատի, հակահեղափոխական տրոցկիզմի փորձերը՝ իր գծում գաղափարները մաքսանհնդութեամբ խցկելու մեր զրականութեան մեջ: Այդ փորձերը, վորոնք ուղղված են սոցիալիստական շինարարութեան դեմ, «պետք ե հանդիպեն բոլշեիկների վճռական հակահարվածին» (Ստալին): Վոչ մի աղատամիտ վերաբերմունք, պետք ե վճռականապես հասցնել վերջին հարվածները «իր փորի վրա սողացող» տրոցկիզմի թափթիւկներին:

Ուժեղացնել դասակարգային զգոնությունը, ամեն որ ուսումնասիրել կուսակցական փաստաթղթերն ու կուսակցական վորոշումները, սովորել մեր բոլշեիկյան կուսակցութեան պատմութեան հիման վրա—անա ամեն մի բրիգադային բջիջի և ամեն մի կոմյերիտականի անելիքը: Պետք ե ինչքան կարելի յե լավ ոգտագործել ինֆորմացիան և կուսակցական վորոշումները, վորոնց հենց բրիգադայում կիրառել գործնական աշխատանքի ընթացքում:

Յերկրորդ, պետք է կազմակերպել կատարման նստու-
գումը, դրա համար ևս ապահովելով յեղած ուշժերի, մա-
նավանդ ակտիվի դասավորությունը:

Բոլշևիկյան յերրորդ գարունը վճռում է հնգամյակի
չորրորդ—ավարտական տարվա հաջողությունը, ահա թի-
խնչու մի առանձին համառությամբ պահանջվում է իր
ժամանակին նախապատրաստություն, վորը կարողանա
ապահովել թե աշխատանքի տեմպերն և թե նրանց վորակը:

Կուսակցության ղեկավարությամբ, պայքարելով աջ
— «ձախլիկ» ոպորտունիստների դեմ, փշրելով կուլակային
դիմադրությունը, զորահավաքելով յերիտասարդությանը
կոմյերիտմիության ԿԿ-ի յերրորդ պլենումի վորոշումները
կատարելու համար, կազմակերպելով բոլշևիկյան ամենորյա
հսկողություն ընդունված վորոշումների կատարման վրա,—
յերկրամասի կոմյերիտմիությունն անկասկած կհաջողեցնի
այնպիսի նախապատրաստություն, այնպիսի տեմպեր,
վորոնք լիովին կապահովեն սահմանված ժամկետերում
հարվածային աշխատանքների կատարումը և լիովին կբա-
վարարեն ագրոտեխնիկական պահանջները:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՄԼԿՅԵՄ ՀՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԿՈՍԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Կոյսնեստոլքուննեի կազմակերպչական-սնեստական ամրապնդ-
ման վերաբերյալ ՀԿ(Բ)Կ Յերկրկումի, Յերկրգործկումի ու Յեր-
կրկոյսնսմիության վորոշումի իրացմանը կոմյերիտմիության
մասնակցություն մասին:

1) Կոլտնտեսությունների հետագա կազմակերպչական-
տնտեսական ամրապնդման վերաբերյալ ՀԿ(Բ)Կ Յերկրկումի
ու Յերկրկոլտնտնության վորոշումից յեղնելով, Յերկրկումը
պարտավորեցնում է ՀամԼԿՅԵՄ կոմիտեներին ու բժիշնե-
րին կիրառել հետևյալ կոնկրետ միջոցառումները:

— Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսա-
կան ամրապնդման վերաբերյալ վորոշումը հասցնել ամեն
մի կոմյերիտականին և յերիտասարդ կոլտնտեսականին,
լայնորեն ուսումնասիրելով այդ վորոշումը բժիշների ժո-
ղովներում, ներգրավելով ժողովներին կոլտնտեսային ան-
կուսակցական յերիտասարդությանը:

— Կազմել կոմյերիտական ակտիվի խմբակներ, վորոնք
պիտի աշխատեն կիրառել մասշայական-քաղաքական մի-
ջոցառումները, կապված այդ վորոշումը հասակավոր կոլ-
տնտեսականների ու կոլտնտեսուհիների մեջ պարզարանե-
լու հետ:

— ՀամԼԿՅԵՄ կազմակերպությունները իրենց անմի-
ջական, ակտիվ մասնակցությամբ պետք է ապահովեն կոլ-
տնտեսություն-գիւղատնների ու բրիգադների մանրացման
աշխատանքը մինչև 1932 թվականի փետրվարի 15-ը: Միա-
ժամանակ անպայման պիտի հաջողեցնել հացամթերումների
պլանի կատարումը և յեկամուտների բաշխումը, առ 1932
թվականի հունվարի 1-ը յուրաքանչյուր կոլտնտեսականի
վաստակած աշխորերի քանակի համապատասխան:

Կոլտնտեսությունները մանրացնելիս յուրաքանչյուր
ռայոնական կոմիտե պետք է մշակե յուրաքանչյուր կոլ-
տնտեսության կից բժիշներ կազմակերպելու կոնկրետ, ոպե-
րատիվ պլան: Յեղնելով սրանից, կոմյերիտականներն
այնպես պիտի բաժանվեն կոլտնտեսությունների և
բրիգադների վրա, վորպեսզի կոմյերիտական բժիշներն ան-
հապաղ ծավալեն աշխատանքը՝ կոլտնտեսությունների կազ-
մակերպչական-տնտեսական անրապնդման ասպարիզում:

Կոմյերիտմիության յուրաքանչյուր բժիշի աշխատան-
քի հիմնական բովանդակությունը պիտի լինի ընկ. Ստալի-
նի վից ցուցմունքների իրագործումը, սոցմրցության և
հարվածայնության զարգացումը, ամենաանհաշտ պայքարը՝
աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխա-
տանքային դիսցիպլինայի ուժեղացման, մանր-խմրակային
գործավարձ մտցնելու և նրա հիմունքով ամեն մի կոլտնտե-

սականի աշխատանքի գնահատման, այսինքն անհատական գործավարձ մտցնելու համար:

Կոլտնտեսական աշխատանքի հաշվառման սխտեմի վերակառուցման մեջ յուրաքանչյուր կոմյերիտականի անմիջական մասնակցութեամբ հաշտեցնել հաշվառքի այնպիսի դրվածք, վորն ապահովե ճիշտ գնահատումը կոլտնտեսականի աշխատանքի վոչ միայն քանակի, այլ զխավորապես վորակի տեսակետից:

Տեխնիկապես գրագետ, պատրաստված կոմյերիտականներից յուրաքանչյուր կոլտնտեսութեան մեջ, բրիգադում նշանակել հաշվառք կատարողներ, չկտրելով նրանց կոլտնտեսութեան արտադրական աշխատանքներից: Յերկրկումը բջիջների հատուկ ուշադրութեանն է հրավիրում նոր կազմակերպվող կոլտնտեսութեաններում լավագույն հաշվետարներ ընտրելու վրա:

Ռայկոմներն ու բջիջները ռայոնական կենտրոններում, խոշոր գյուղերում, կոլտնտեսական սխտեմի հետ միասին պիտի կազմակերպեն կարճատև կուրսեր, պատրաստելու և վերապատրաստելու այն կոմյերիտականներին, յերիտասարդներին, վորոնք ընտրված են կոլտնտեսութեաններում հաշվառքային աշխատանք կատարելու համար:

3. Կոմյերիտութեան կազմակերպութեանների աշխատանքների ընթացքում ամենագլխավոր խնդիրը հանդիսանում է հետևյալը.— իրական, հարստե, բուլճարկյան աշխատանք, տիրապետելու ագրոտեխնիկային, մտցնելու նրան գյուղատնտեսութեան բոլոր ճյուղերը, իրագործելու հասկավոր կուլտուրաների բերքը 16 տոկոսով, յեգիպտացորենինը 25 տոկոսով և արեածաղկի բերքը 20 տոկոսով բարձրացնելու կոնկրետ խնդիրը:

Կոմյերիտական—յերիտասարդական հարվածային բրիգադները, խմբակները, հողամասերը պետք է ցույց տան կոնկրետ որինակներ ագրոտեխնիկան կոլտնտեսութեաններում մտցնելու համար:

Առաջարկել կոմիտեներին ու բջիջներին, վոր նրանք,

յերնելով տվյալ ռայոնի եկոնոմիկայից, կոմյերիտականների խմբակների համար սահմանեն ագրոտեխնիկական գիտելիքներին տիրապետելու առաջադրութեաններ, այս աշխատանքներին լայն չափով ներգրավելու գյուղատնտեսական մասնագետներին:

Կոմյերիտական կազմակերպութեանները պետք է ամենասերտ կապ հաստատեն պետական գյուղատնտեսական տեսչութեան հետ, ցույց տալով նրան ամենուրեք գործնական ոգնութեան վերահսկողութեան և ագրոտեխնիկական միջոցառումների կիրառման ասպարիզում:

ՀամԿՅՅԽ կոմիտեներն ու բջիջները պետք է կոնկրետ պարտավորութեաններ ստանձնեն յերաշտի դեմ պայքարի պլանն իրագործելու համար: Նրանք պետք է անհապաղ աշխատանքներ ծավալեն ձյունը պահելու, լճակներ կառուցելու համար և այլն:

Յերկրամասի բոլոր խոշոր գյուղերում կազմակերպվում են մեքենատրակտորային կայաններ. աշխատանքի յեն անցնում 700 կոմբայն, 1300 ավտոմեքենա և 250 պիկեր: Այս բոլորը պարտավորեցնում է կոմյերիտութեան բջիջներին առանձին ուշադրութեան կենտրոնացնել գյուղատնտեսական բարդ մեքենաները (կոմբայն, ավտոմեքենա, պիկեր) լավ ուսումնասիրելու վրա: Խնդիրը կայանում է նրանում, վոր հարկավոր է վոչ միայն սովորել կառավարել այդ ամենաբարդ մեքենաները, այլ նապես գիտենալ այս կամ այն մեքենայի ամեն մի մասը, իսկույն և յեթ պատկորտիզացիա անցկացնել, կազմակերպելով հողատար վերաբերմունք դեպի ամեն մի այդպիսի մեքենա և ճիշտ ոգտագործելով նրանց:

Առաջարկել ռայկոմներին ու բջիջներին, վոր նրանք կոնկրետ միջոցառումներ մշակեն՝ պատրաստելու և վերապատրաստելու տրակտորիստներ, կոմբայնավարներ, շոֆերներ, մեխանիկներ, այդ նպատակով ընտրելով լավագույն հարվածային կոմյերիտականներին, յեղակետ ունենալով

Թե ամբողջ ռայոնի և թե յուրաքանչյուր առանձին կոլտնտեսութեան պահանջները:

Յերկրկումը լիակատար պատասխանատվութիւնն է դրնում մարդկոճներին, ռայկոճներին ու բլիճներին վրա, այն բոլոր միջոցառումների անցկացման համար, վորոնք կապված են պատրաստման ու վերապատրաստման այդ կուրսերի հետ:

5) Կոլտնտեսութեանների արտադրական-ֆինանսական պլանները կազմելու համար հունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ը հայտարարած միասնակուժ կոմյերիտական կազմակերպութեանները պետք է կոլտնտեսութեանների վարչութեաններին ոգնելու համար ընտրեն կոմյերիտականներ: Վերջիններս պիտի պլաններ կազմելու գործնական աշխատանք կատարեն: Պլաններում պետք է նախատեսվեն այն բոլոր միջոցառումները, վորոնք կապված են ագրոտեխնիկա մտցնելու հետ և վորոնք ապահովում են բերքաւովութեան բարձրացումն և իրական պայքարը կորստների դեմ: Ճշգրիտ կերպով նախատեսել բոլոր գործնական միջոցառումները գարնանային գյուղատնտեսական կամպանիան անցկացնելու համար, առանձին ուշադրութեւն դարձնելով, վոր յուրաքանչյուր կոլտնտեսութեւն ապահովված լինի սերմացուների հարկավոր քանակութեամբ, իր ժամանակին հորվի ու պահպանվի սերմացուն (զտում, ախտահանում, ստուգում, աճեցման միջոցով ծրելու ընդունակութեան հայտնաբերում և այլն):

Ամբողջ գյուղատնտեսական ինվենտարը լիակատար, մարտական պատրաստութեան մեջ դնել, ինչպես և կենդանի քաշող ույժը, ճշգրիտ ու կայուն ժամկետեր սահմանել տրակտորների և այլ գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման համար՝ իհարկէ անպայման ճիշտ պահպանելով Հի(բ)Կ Յերկրկոմի, Յերկրգործկոմի և Յերկրկոլտնտմիութեան սահմանած ժամկետերը ամբողջ գյուղատնտեսական ինվենտարի վերանորոգման համար:

Զորահավաքել բոլոր կոմյերիտականներին, դարբիններին, փականագործներին, մեխանիկներին, ինչպես և այլ

մասնագետներին վերանորոգման բրիգադներում, արհեստանոցներում անմիջականորեն աշխատելու համար, առանձին ուշադրութեւն դարձնելով, վոր տեղում պատրաստվեն գյուղատնտեսական մեքենաների, մանավանդ տրակտորների պակասող մասերը:

Լծկան ույժը, մանավանդ ձիերը գարնանային գյուղատնտեսական աշխատանքներին պատրաստ պահելու գործում կոմյերիտական բլիճների աշխատանքը պիտի լինի նրանց հիմնական խնդիրներից մեկը:

Յուրաքանչյուր տասն ուրը մեկ անգամ մարդկոճները, ռայկոճները պետք է հաշվետվութեւն տան Յերկրկոմին, թե կոմյերիտական կազմակերպութեաններն ինչպես են մասնակցել գարնանային գյուղատնտեսական կամպանիայի նախապատրաստութեանը:

6) Կոլտնտեսութեանների վարչութեաններին հաշվետու վերընտրական կամպանիայի առթիվ, ծավալել մասսայական քաղաքական լայն աշխատանք, աշխատել, վոր կոմյերիտականներն և անկուսակցական կոլտնտեսային բանվոր յերիտասարդութեանն արտադրական-քաղաքական ավելի մեծ ակտիվութեւն հայտնաբերեն: Կոլտնտեսութեանների դեկավար որգանների վարչութեանների մեջ առաջ քաշել լավագույն հարվածային կոմյերիտականներին, վորոնք կոլտնտեսութեանների աշխատանքների ընթացքում տնտեսական փորձ են ձեռք բերել:

Յերկրային Կոմիտեն շեշտում է կոմյերիտական կազմակերպութեանների բացառիկ պատասխանատվութեւնն այն բոլոր միջոցառումներն անցկացնելու համար, վորոնք ապահովում են գարնանային գյուղատնտեսական աշխատանքների հաջող կատարումը: Յերկրային կոմիտեն յուրաքանչյուր կոմյերիտականից աշխատանքի խկական բոլշեվիկյան տեմպեր է պահանջում կոնկրետ միջոցառումների գործնական իրականացման, կոլտնտեսութեանների կազմակերպական-տնտեսական ամրապնդման համար:

Վճռական պայքարն ընդդեմ աժեն տեսակի ուղոր-

տունիստական և կուլակային տրամադրությունների (խկական ապրանքայնության թագուստ, հավասարանք՝ յեկամուտների բաշխման մեջ, մանր-բուրժուական վերաբերմունք դեպի հասարակական գույքը, վորպես ոտարի գույքի, վորը կարելի չէ հափշտակել անպատիժ կերպով), ընդդեմ «ձախ» ցատկունների (խկական ղեկավարության և կուտնտեսային ինքնագործունեության փոխարինումը վարչական հրամաններով և այլն) պետք է ապահովել կուտնտեսությունների վերելքն ամենաբարձր աստիճանի, մացած անհատական չքավոր միջակ տնտեսությունների հետագա անցումը դեպի կուտնտեսությունները և կուլակության վերջնական վերացումը» (ՀԿ(բ)Կ Յերկրկումի, Յերկրգործկումի ու Յերկրկուտնտնությունի վորոշումից)։

ՀԿ(բ)Կ Յերկրկումի, Յերկրգործկումի, Յերկրկուտնտնության վորոշման ճշգրիտ իրագործումը, անհաշտ պայքարը կուլակցության զլխավոր դժի համար—պետք է ավելի ևս բարձրացնեն կոմյերիտությունի դերն ամբողջ կուտնտեսային շինարարության մեջ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն	1
Հնգամյակի ավարտման տարին	5
Թշնամին փոխում է իր տակտիկան	18
Պլանը կկրճատի ցանքի ժամկետերը	24
Ստուգել գործը տնտեսաշվարկով	32
Ի՞նչն է վնասակար ձիուն	42
Ստուգել, պատրաստել	52
Տեմպեր և վորակ	59
Հավելված .—ՀամԼԿՅՅԵմ Հյուս, Կովկասի Յերկրկումի վորոշումը	66

Ответственный редактор
М. Гигоян
Технический редактор
Г. М. Маркрян

Сд. в набор 16/II—1932 г.
Сд. в печать 21/II—1932 г.
Объем 2 1/4 печ. листа
Тираж 1500 экз.

ՀՀ Ազգային գրադարան



NL0185017



На армянском языке

Никитин

ТРЕТЬЯ РЕШАЕТ

Комсомол в борьбе за третий
большевистский сев

Из-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ՀԱՄԱԶԵՍԵՐ՝ ՈՍՍՏՈՎ-ԴՈՆ,
ՄՈՍԿՎԱՍԿԱՅԻ ՓՈՂ. 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)